«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» (այսուհետ՝ ՇՏՊՔ) ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ԿԳՄՍ նախարարության ֆինասավարմամբ և ուսումնական հաստատության կողմից ներկայացված դիմումի հիման վրա: ՇՏՊՔ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Գործընթացը կազմակերպելիս ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ի «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցն անդրադառնում է ՇՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանն՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշների ու չափորոշիչների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 20
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 22
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 26
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 31
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 34
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 38
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 41
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 44
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 47
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 49
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 52
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 53
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 53
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 56
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 58
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 59

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվել, որ ըստ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի 2016-2021 թթ. ռազմավարական ծրագրի ՇՏՊՔ-ի առաքելությունն է՝ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական հաստատությունն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից՝ քոլեջը խթանում է իր ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը:
Քոլեջը մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ուսուցման, հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ քոլեջը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի և ղեկավար դերի համար, մասնագիտական կարիերային և հարատև ուսումնառությանը՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան»:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի 2016-2021 թթ. ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ) ներկայացված են նաև տեսլականը, ռազմավարական և աջակցող նպատակները:

ՇՏՊՔ-ն այսօր իրականացնում է 5 միջին մասնագիտության կրթական ծրագիր:

1. Սոցիալական աշխատանք (2 տարի 4 կիսամյակ տևողությամբ)
2. Զբոսաշրջություն (2 տարի 4 կիսամյակ տևողությամբ)
3. Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (2 տարի 4 կիսամյակ և 4 տարի, 8 կիսամյակ տևողությամբ)
4. Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և համակարգչային ցանցեր (4 տարի, 8 կիսամյակ տևողությամբ)
5. Հագուստի մոդելավորում և նախագծում (3 տարի 6 կիսամյակ տևողությամբ):

ՇՏՊՔ-ն իրականացնում է նաև 3 նախնական մասնագիտության կրթական ծրագիր («Համակարգիչների շահագործում», «Խոհարարական գործ», «Գովազդ»):

ՇՊՏՔ-ն ակտիվորեն համագործակցում է գործընկեր գործատուների հետ, ինչը դրականորեն է անդրադառնում կրթական ծրագրերի իրականացման վրա: Ներքին շահակիցները և գործատուներն ընդունում են քոլեջի կարևորությունը տարածաշրջանի աշխատաշուկայի համար, հատկապես ՏՏ, կարի արտադրության, զբոսաշրջության ոլորտներում: Շահակիցները ընդգրկվելով տարբեր խորհուրդների կազմում մասնակցում են

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի ինքնակենսագրականները:

ՌԾ մշակման գործընթացին: ՇՏՊՔ-ում մշակված են շահակիցների կարիքների վերհանման գործիքներ, իրականացվել են հարցումներ, սակայն դրանք չեն վերլուծվել և չեն ծառայել իրենց նպատակին:

ՇՏՊՔ կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, բոլոր կառավարման մարմինները ունեն իրենց կանոնակարգերը: Քոլեջը կրթական գործունեություն իրականացնելու համար որոշ չափով ապահովված է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով, որոնք սակայն այդքան էլ չեն համապատասխանում քոլեջի 2016-2021 թթ. ՌԾ-ում դրված նպատակներին: Քոլեջի կառավարման համակարգը, գործող կանոնակարգերը հնարավորություն են տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն նրանց նախաձեռնողականությունը ցածր է: Քոլեջի միջնաժամկետ ծրագրերը հիմնականում փոխկապակցված չեն քոլեջի ռազմավարական ծրագրին: Կատարողականին ուղղված ներքին մշտադիտարկման և գնահատման համակարգի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում գնահատել երկարաժամկետ և միջնաժամկետ պլանների իրականացման արդյունավետությունը: Հաշվետվությունները ներքևից վերև կանոնավոր կերպով ներկայացվում են, սակայն դրանք չունեն վերլուծողական բնույթ և չեն ներառում գնահատման տարրեր: Որակի կառավարման սկզբունքը (ՊԻԳԲ) դրված չէ քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացնելու հիմքում, ինչը ռիսկի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը: Քոլեջը լիարժեք չի կատարում իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, վերլուծության և գնահատման հուսալի մեխանիզմների բացակայության հետևանքով որոշումներ կայացնելիս քոլեջը չի կարողանում հիմնվել հավաստի տվյալների վրա:

ՇՏՊՔ ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է ՊԿՉ-ներով, քոլեջը իր համար չի մշակել ՄԿԾ-ներ: Քոլեջի մասնագիտությունները համապատասխանում են Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և Գյումրի քաղաքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայություններին, աշխատաշուկայի պահանջներին: Քոլեջի մասնագիտությունները բովանդակային առումով համահունչ են հանրապետության մյուս քոլեջների մասնագիտություններին, արտերկրի նմանատիպ ծրագրերի հետ համեմատություն քոլեջում չի արվել: Թեպետ քոլեջի ՌԾ-ում նախատեսվում է նպաստել ուսանողների ու դասախոսների շարժունությանը, սակայն այդ ուղղությամբ դեռևս քայլեր չեն ձեռնարկվում: Դասախոները կիրառում են դասավանդման բազմաթիվ ինտերակտիվ մեթոդներ, որոնք հարստացվել են նաև առցանց ուսուցման ընթացքում: Դասախոսների կողմից մշակվել են հանձնարարականներ, որոնք նպաստում են ուսանողների յուրաքանչյուր մոդուլի ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը, սակայն հանձնարարականների միասնական շտեմարան ստեղծված չէ: Դասախոսների առարկայական ծրագրերում ներկայացված են գնահատման չափանիշները, սակայն ակադեմիական ազնվության դիսկուրսը քոլեջում դեռևս բացակայում է:

Քոլեջում մոդուլի և առանձին դասընթացների մակարդակով առկա է վերջնարդյունքահեն մոտեցում, սակայն ՄԿԾ մասնագրի բացակայության պատճառով շրջանավարտի հավաքական պրոֆիլը ըստ կոմպետենցիաների և վերջնարդյունքների նկարագրված չէ: Քոլեջում ըստ մոդուլների և առարկաների ուսումնառության արդյունքների կիրառվում են բազմազան դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնց մի մասը բավական արդիական և առաջադիմական է: Գնահատման մեթոդները նույնպես բազմազան են: Բողոքարկման հնարավորություն ուսանողներին ընձեռնված է, սակայն համակարգը լրամշակման կարիք ունի: Ամփոփիչ ատեստավորման ընթացքում ուսանողները կարող են հանձնել քննություն կամ դիպլոմային աշխատանք ներկայացնել:

Քոլեջում մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկումը իրականացվում է դասալսումների միջոցով, որոնց արդյունքները քննարկվում են

ամբիոնների/ուսումնամեթոդական խորհրդի նիստերին: Արդյունավետության գնահատման այլ մեխանիզմներ քոլեջում չկան:

Քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ: Հատատության ներսում ուսանողների կրթական կարիքների բացահայտման մեխանիզմները սահմանափակ են, հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր առկա չեն: Քոլեջը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը՝ իրականացնելով լրացուցիչ (նախասիրական) պարապմունքներ, խորհրդատվություններ, ինչպես նաև ուսանողների համար հնարավորություն ստեղծում արտաքին գործընկերների միջոցով բավարարել իրենց կրթական կարիքները:

Քոլեջում ստեղծվել է կարիերայի կենտրոն: Հաստատությունը քայլեր է անում ապահովելու համար ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորումը: Հանձնարարականները, կուրսային, դիպլոմային աշխատանքները նպաստում են ուսանողների վերլուծական, քննադատական և մասնագիտական մտածողության ձևավորմանը: Ուսանողները մասնակցում են մրցույթների, ցուցահանդեսների: Ուսանողների իրավունքները հիմնականում պաշտպանվում են կուրսղեկի ինստիտուտի միջոցով, ուսանողական խորհուրդը լիարժեք չի իրականացնում այդ գործառույթը:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում փաստացի դասավանդում է իրենց ոլորտներում փորձառություն ունեցող և մշտապես զարգացման ձգտող դասախոսական կազմ: Դասախոսների մեծ մասը վերապատրաստված է: Աշխատանքի հանդեպ անձնակազմի մոտիվացիան բարձր է: Դասախոսական և ՈւՕ կազմը մեծ հոգատարությամբ է վերաբերվում ուսանողներին, ստեղծելով հնարավորինս ուսանողակենտրոն միջավայր: Դասախոսական կազմը երիտասարդացվում է, պահպանելով լավագույն որակավորումներով առավել փորձառու կադրերին: Դասավանդման համար դասախոսների կրթությունը և/ կամ որակավորումները համապատասխան են: Քոլեջում առկա են դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ: Քոլեջում ստեղծվել է դասախոսական և ՈւՕ կազմի կարիքների վերհանման մեխանիզմ, որը սակայն դեռևս հուսալի չէ: Քոլեջը փորձում է ապահովել իր դասախոսական կազմի կայունությունը, սակայն կադրերի ռեզերվի բացակայությունը ռիսկային է դարձնում այն:

Քոլեջը դեռևս չի հստակեցրել ինչ է իր համար հետազոտությունը, այդ պատճառով քոլեջի տարբեր տարիների ռազմավարական փաստաթղթերում այն ներկայացվում է տարբեր կերպ: 2016-2021թթ. ռազմավարական ծրագրում քոլեջի սահմանած նպատակները և խնդիրները շատ հավակնոտ էին և անհասանելի, քանի որ սահմանված էր շատ բարձր նշաձող, որին քոլեջը չէր կարող հասնել իր ունեցած մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսներով: Քոլեջի ղեկավարությունը, գիտակցելով դա, 2021-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրում փոփոխություններ է արել, իջեցրել նշաձողը և հետազոտական շեշտադրումն ուղղել ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը: Քոլեջում առկա են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ, որոնք երևում են դիպլոմային, կուրսային աշխատանքներում, առարկաների հանձնարարականներում: Համապատասխան մեխանիզմների բարելավման դեպքում դրանք կարող են ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակին համապատասխան ձևավորել վերլուծական, քննադատական և մասնագիտական մտածողություն, ինչպես նաև մղել ինքնուրույն ուսումնասիրությունների:

Դասախոսների հետազոտական գործունեությունը խրախուսող մեխանիզմն արդյունավետ չէ: Ամբիոնների վերացման պատճառով վտանգված է մեթոդական ձեռնարկների, զեկույցների պլանավորման և քննարկումների իրականացումը:

Քոլեջն ունի մասնագիտությունների իրականացման համար բավարար նյութատեխնիկական բազա: Քոլեջում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է համաձայն գործավարության կարգի: Քոլեջում առկա են անվտանգության և առողջապահության ապահովման ծառայություններ: Քոլեջում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չեն գործում:

Քոլեջն ունի ներքնից վերև հաշվետվողականության մեխանիզմ, որն աշխատում է կայուն պարբերականությամբ և ցույց է տալիս կարճաժամկետ պլանների իրագործումը, սակայն հաշվետվությունները չեն ապահովում քոլեջի ռազմավարական ծրագրի իրագործման գնահատումը, չունեն վերլուծական բնույթ: Քոլեջի գործունեության թափանցիկությունը ապահովվում է սոցիալական ցանցներով, տեղական ԶԼՄ-ների, տարածաշրջանի դպրոցներ այցերի, ՏԻՄ-երի հետ առկա կապերի, աշխատանքի տոնավաճառների, ցուցահանդեսներին մասնակցելու միջոցով: ՇՏՊՔ-ն իրականացնում է կարճաժամկետ ծրագրեր, նպաստելով գիտելիքի փոխանցմանը հասարակությանը՝ հատկապես խոցելի խմբերին:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր, մեխանիզմներ չկան: Օտար լեզուների իմացության մակարդակը ՇՏՊՔ դասախոսների և ուսանողների շրջանակում ցածր է: Այս ուղղությամբ քոլեջն ակտիվ քայլեր չի ձեռնարկում: Քոլեջն ունի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության փորձ: ՇՏՊՔ-ն ակտիվորեն համագործակցում է քաղաքի գործատուների, գյուղական համայնքների ՏԻՄ-երի, դպրոցների հետ: Գործընկեր գործատուները հնարավորինս ներգրավված են պրակտիկաների կազմակերպան հարցերում:

Քոլեջում որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Թեպետ ՈԱ պատասխանատուի հաստիքը բացվել է 2017 թ., սակայն ՈԱ համակարգի ներդրման աշխատանքները ընթացել են ընդհատումներով, ՈԱ քաղաքականությունը քոլեջը հաստատել է միայն 2020թ.-ին: Քոլեջը մինչ այժմ չունի ՈԱ հստակ ընթացակարգեր, անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ: Քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրում է մարդկային, նյութական և որոշ ֆինանսական ռեսուրսներ, սակայն ներգրավված աշխատակիցները չունեն անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ իրենց գործառույթներն իրականացնելու համար և վերապատրաստման կարիք ունեն: ՊԻԳԲ շրջափուլը կառավարման և վարչարարության մեջ դեռևս չի գործում:

ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Քոլեջի մասնագիտությունները համապատասխանում են առաքելությանը և տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին։
2. Կառավարման գործընթացներում առկա են մեխանիզմներ ապահովելու համար շահակիցների մասնակցությունը որոշումների կայացմանը։
3. ՇՏՊՔ-ն սերտ համագործակցում է Գյումրու ԶՏԿ-ի և տարածաշրջանի գործընկեր գործատուների հետ։
4. Քոլեջում 2 մասնագիտություններով ներդրվել են Դուալ կրթական ծրագրեր։
5. Դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում ուսանողակենտրոն են, համահունչ են ժամանակի պահանջներին։
6. Առկա են կրթության և հետազոտության փոխկապակցման տարրեր։
7. Մասնագիտությունների իրականացման համար քոլեջն ապահովված է անհրաժեշտ շենքային պայմաններով և ռեսուրսային բազայով։
8. Քոլեջն ունի ՄԿԾ-ներին համապատասխան որակավորում ունեցող, մոտիվացված դասախոսական կազմ, որի մի մասը մասնակցել է վերապատրաստումների Հայաստանում և արտերկրում։
9. Քոլեջում գործում է կուրսղեկների ինստիտուտ, որը մեծապես նպաստում է ուսանողների կարիքների վերհանմանը։
10. Քոլեջի շենքային պայմանները և ռեսուրսային բազան պարբերաբար բարելավվում է։
11. Քոլեջում կան ուսումնական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններ։
12. Քոլեջում առկա է ներքևից վերև գործող հաշվետվողականության համակարգ։
13. Քոլեջն ունի կարիերայի կենտրոնի և ՈԱ պատասխանատուների հաստիքներ։

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Ռազմավարական ծրագրի իրագործման մշտադիտարկման և գնահատման մեխանիմները բացակայում են։
2. Քոլեջի գործողությունների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները չեն բխում ռազմավարական ծրագրից։
3. Կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություններ չեն արվում։
4. Կառավարման և որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը ամբողջությամբ ներդրված չէ. թերի են գնահատման և բարելավման բաղադրիչները։
5. Ուսանողների դերակատարությունը քոլեջի կառավարման գործընթացում շատ ցածր է։
6. Դասախոսների խրախուսման համակարգը լիարժեք չի գործում։
7. Սակավ են դասախոսների և ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները, դրանց վերլուծությունները խորքային և համակողմանի բնույթ չեն կրում ու չեն նպաստում բարելավումներին։
8. Բյուջեի այլընրանքային ֆինանսական մուտքերը խիստ սահմանափակ են։

9. ՇՏՊՔ-ում չեն ստեղծվել նպաստավոր պայմաններ միջազգայնացման և փորձի փոխանակման համար:
10. Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս ներդրման փուլում է:
11. Քոլեջի հետ համագործակցող գործատուների թիվը մեծ չէ, գործատուները չունեն համագործակցելու շահագրգռություն:
12. Ռեսուրսները չեն բավարարում քոլեջի շարունակական զարգացման համար:
13. Քոլեջի ռեսուրսները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցողների համար:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1) Բարելավել 2021-2023 թթ. ռազմավարական ծրագիրը, դարձնելով այն երկարաժամկետ:
2) Կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումը և հաշվետվողականությունն իրականացնել ՌԾ-ին համապատասխան:
3) Ներքին և արտաքին շահակիցներին ներգրավվել ռազմավարական պլանի վերանայման ու իրագործման գործընթացին:
4) Հետամուտ լինել ՌԾ նպատակների և խնդիրների առաջընթացի գնահատման քանակական և որակական ցուցիչների բարելավմանը և լրամշակմանը, պարբերաբար վերլուծել ՌԾ իրականացման արդյունքները: Ներդնել մշտադիտարկման մեխանիզմ:

Կառավարումն ու վարչարարությունը

1) Բարելավել պլանավորման համակարգը և իրականացնել երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ՌԾ-ի հետ փոխկապակցված պլանավորում:
2) Վերանայել կառավարման բոլոր մակարդակներում քոլեջի քաղաքականությունների ու ընթացակարգերի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը: Ստեղծել ռիսկերի կառավարման համակարգ:
3) Բարելավել որոշումների կայացման գործընթացին շահակիցների ներգրավման մեխանիզմները: Ներքին շահակիցների առավել ակտիվ ու մասնակցային ներգրավվածությունները որոշումների կայացմանը կնպաստի ընդունված որոշումների հասանելիությանը յուրաքանչյուր շահակցին:
4) Հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների:
5) Կազմակերպել վարչական աշխատակիցների համար վերապատրաստումներ՝ ուղղված արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ գործընթացների ներդրմանն ու դրանց շարունակական բարելավմանը:
6) Ներդնել վերևից ներքև հաշվետվողականության մեխանիզմ:

7) Ներդնել վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմներ:
8) Պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական տվյալները:

Մասնագիտության կրթական ծրագրերը

1) Ներքին և արտաքին շահակիցների, հատկապես գործատուների հետ քննարկման, բենչմարքինգի իրականացման արդյունաքում մշակել ՄԿԾ մասնագրեր, որտեղ հստակ նշված կլինեն ՄԿԾ նպատակները, խնդիրները, ուսանողների կրթական վերջնարդյունքները, դրանց ապահովման համար անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական ռեսուրսները::
2) Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար իրականացնել ուսանողների առաջընթացի քարտեզագրում (ակնկալվող արդյունքներին համապատասխան):
3) Հավաքագրել, համակարգել ըստ մասնագիտությունների հանձնարարականները, ստեղծելով մասնագիտական կրթական վերջնարդյուքների ձեռքբերման համար անհրաժեշտ հանձնարարականների շտեմարան:
4) Ակնկալվող արդյունքների համապատասխանության տեսանկյունից ներդնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության ընթացակարգեր, դրանց արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ: Շարունակաբար մշտադիտարկել ուսանողների առաջընթացը դասընթացներում նախապես սահմանված հանձնարարականների միջոցով:
5) Իրականացնել պրակտիկաների արդյունավետության վերլուծություններ և կատարել բարելավում:
6) Ապահովել ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի նորմեր: ՇՏՊՔ-ում հատուկ դասընթացների միջոցով ուսանողներին տեղեկացնել ակադեմիական ազնվության կարևորության, գրագողության և դրա հետևանքների ու կանխարգելման մասին:
7) Ներքին և արտաքին շահակիցների (հատկապես գործատուների) ակտիվ ներգրավմամբ իրականացնել բոլոր կրթական ծրագրերի պարբերական մշտադիտարկում, արդյունավետության գնահատում և համապատասխան բարելավման առաջարկություններ ներկայացնել լիազոր մարմիններին:
8) Դիտարկել միջազգայնացման հնարավորությունները, նպաստել ուսանողների և դասախոսների շարժունության համար նախապայմանների ստեղծմանը:

Ուսանողները

1) Մշակել ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը գնահատող գործիքներ և իրականացնել առկա մեխանիզմների արդյունավետության գնահատում ու բարելավում:

2) Բարելավվել և կանոնակարգել ուսանողների կրթական կարիքների բացահայտման առկա մեխանիզմները։
3) Մշակել և ներդնել ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմներ։
4) Աջակցել ուսանողական խորհրդին գիտակցել իր դերակատարությունը ուսանողների իրավունքների պաշտպանության և հաշվետվողականության ապահովման հարցում՝ պարբերաբար տեղեկացնել ուսանողությանը կառավարման մարմիններում ընդունված որոշումների մասին։
5) Գնահատել Կարիերայի կենտրոնի գործունեության արդյունավետությունը ըստ կանոնակարգում սահմանված գործառույթների, մշակել և իրականացել թերությունների վերացման ծրագիր։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

1) Վերհանված կարիքների հիման վրա կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ։
2) Գնահատել կադրերի խրախուսման համակարգի արդյունավետությունը և բարելավել այն։
3) Մեծացնել գործատու կամ մասնագիտական պրակտիկ ոլորտում աշխատող դասախոսների ներգրավվածությունը։
4) Մշակել դասախոսական կազմի կայունությունը ապահովվող մեխանիզմներ։
5) Սահմանել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և աջակցության հստակ մեխանիզմներ։
6) Լրամշակել և ամբողջացնել վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի նկարարգրերը/ պաշտոնի անձնագրերը։

Հետազոտությունը և զարգացումը

1) Սահմանել հստակ և իրատեսական հետազոտական հետաքրքրություններ և հավակնություններ՝ գնահատելով քոլեջի ռեսուրսային հնարավորությունները։
2) Մշակել ուսանողների հետազոտական ունակությունների զարգացման ծրագիր։
3) Ուսումնասիրել և տարածել սեփական և այլ հաստատությունների լավագույն փորձը, ձևավորել հետազոտական, ինքնուրույն ստեղծագործելու, վերլուծելու կարողություններ ու քննադատական և մասնագիտական մտածողություն՝ ուսանողների կողմից կատարվող աշխատանքների միջոցով (դիպլոմային, կուրսային աշխատանքներում, առարկաների հանձնարարականներ)՝ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան։
4) Մշակել և իրականացնել դասախոսական կազմի հետազոտական գործունեության գնահատման և խրախուսման գործուն մեխանիզմներ, ինչը կարող է նպաստել դասախոսական կազմի հետազոտական հմտությունների զարգացմանը։
5) Խրախուսել դասախոսական կազմի՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման պրակտիկան։

6) Գնահատել հետազոտական գործունեության միջազգայնացման հնարավորությունները մանկավարժության և մասնագիտական ոլորտներում:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

1) Զգտել իրականացնել կարճաժամկետ ծրագրեր՝ ապահովելով ֆինանսների այլընտրանքային ներհոսք:
2) Մշակել և կիրառության մեջ դնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
3) Իրականացնել ռեսուրսներով համալրվելու ռիսկերի գնահատում և կառավարում:
4) Խորացնել գործընկեր գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառման պրակտիկան:
5) Գնահատել առկա փաստաթղթաշրջանառության արդյունավետությունը և բարելավվել այն:
6) Քոլեջի ֆինանսական միջոցների խնայողության, ծախսերի կրճատման համար դիտարկել գործընկերներ գտնելու և արևային կայան ստեղծելու հնարավորությունը:

Հասարակական պատասխանատվությունը

1) Հաշվետվողականությունը դարձնել առավել վերլուծական, սահմանել հաշվետվողականության քննարկման մեխանիզմներ, պարբերաբար գնահատել գործընթացի արդյունավետությունը և բարելավել դրանք:
2) Վերականգնել ՇՏՊՔ-ի պաշտոնական կայք էջը, ընդգրկելով քոլեջի վերաբերյալ տեղեկատվություն նաև օտար լեզուներով. կայքում գործարկել այցելուների կողմից մեկնաբանություններ թողնելու և հետադարձ կապ պահպանելու հնարավորությունը:
3) Facebok սոցիալական ցանցում զետեղված տեղեկատվությունը հարստացնել քոլեջում իրականացվող բոլոր մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվությամբ, հրապարակել տվյալներ քոլեջի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ՝ տրամադրելով շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվություն հասարակությանը:
4) Համակարգել հասարակության հետ տարվող աշխատանքները և ներդնել հետադարձ կապի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ՝ նպաստելով քոլեջի դրական կերպարի պահպանմանն ու ամրապնդմանը, հասարակական վարկանիշի և տեսանելիության բարձրացմանը, զարգացնելով շահակիցների հետ համագործակցությունը:
5) Ձեռնարկատիրական գործունեության, վերապատրաստումների և լրացուցիչ դասընթացների կազմակերպման միջոցով ընդլայնել վճարովի ծառայությունների ձևերն ու ֆինանսական մուտքերը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

1) Մշակել և իրականացնել ծրագիր ուղղված ուսանողական, դասախոսական և վարչական կազմի օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը՝ միջազգայնացմանը նպաստելու նպատակով:
2) Ապահովել համագործակցության հաստատման ինստիտուցիոնալ մեխանիզմներ, այդ թվում գործատուների հետ՝ համագործակցության կայունության ապահովման և ռիսկայնության նվազեցման նպատակով:
3) Գնահատել միջազգայնացման հնարավորությունները ու մշակել ճանապարհային քարտեզ:

Որակի ներքին ապահովման համակարգը

1) Հստակ պլանավորել որակի ապահովման գործընթացները:
2) ՈԱ նոր հաստատված սկզբունքների, քաղաքականության իրագործման համար մշակել և ներդնել հստակ ընթացակարգեր, ՈԱ անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ:
3) Ներդնել տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման, տարածման համակարգված մոտեցումներ:
4) Քոլեջի բոլոր գործընթացների հիմքում ներդնել ՊԻԳԲ շրջափուլը:
5) Ապահովել ՈԱ անձնակազմի կայունություն և հնարավորություն ստեղծել ՈԱ պատասխանատուների վերապատրաստման համար:
6) Քանակական և որակական հետազոտությունների միջոցով իրականացնել կարիքների վերհանում, խնդիրների բացահայտում և դրանց համապատասխան քայլերի մշակում:
7) Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվել որակի ապահովման գործընթացներին, ապահովել հետադարձ կապ, ձևավորել որակի մշակույթ:

Մարիամ Մովսիսյան,
Փորձագիտական խմբի ղեկավար
Ամսաթիվ՝ 29.01.2021

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Քոլեջի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Մարիամ Մովսիսյան**, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն, ՀՀ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Էլեն Հարությունյան,** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի քոլեջի դասախոս, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Արփի Սիմոնյան,** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի քոլեջի դասախոս, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Դավիթ Ոսկանյան,** Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի վեբ ծրագրավորում մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող, ՀՀ, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Քաղաքականությունների մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ Լիլիթ Զաքարյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է քոլեջի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը 2020 թ. հուլիսի 17-ին ՈԱԱԿ ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

ՈԱԱԿ-ը կայացրել է դիմում-հայտի ընդունման մասին որոշում (31.07. 2020թ.) և կազմել ու հաստատել աշխատանքների իրականացման ժամանակացույց: ՇՏՊՔ-ի, ՈԱԱԿ-ի և ԿԳՄՍ նախարարության միջև կնքվել է եռակողմ պայմանագիր:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով, որ ՇՏՊՔ-ն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը և դրա բարդությունը, ՈԱԱԿ-ը որոշակի աշխատանքներ է իրականացրել՝ նախապատրաստելով քոլեջն ինքնավերլուծության և հավատարմագրման գործընթացին: Հունիս ամսին ՇՏՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո ՄՈՒՀ-ն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: Աշխատակիցներն այդ ընթացքում

ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարվեր և ինքնավերլուծության ընթացքում չափանիշների շրջանակում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձներ: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին սույն թվականի հուլիսի 13-ին իրականացրել են մշտադիտարկում ՇՏՊՔ-ում:

ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 16.10. 2020թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է ՄՈՒՀ-ի աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել:

Քոլեջը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 2020 թ. հոկտեմբերի 16-ին ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողներն ուսումնասիրել են ինքնավերլուծությունը և կից փաթեթը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին և ՄԿՈ ոլորտում որդեգրած քաղաքականության համապատասխանությունը ստուգելու նպատակով: Թեպետ ինքնավերլուծությունում եղել են թերություններ, չափորոշիչների մեծ մասի տեքստերը եղել են նկարագրողական բնույթի և ոչ թե վերլուծական, հաշվի առնելով, որ քոլեջի համար հավատարմագրման առաջին փորձն է՝ ինքնավերլուծությունը և կից փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել են:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն, իրականացրել է նախնական գնահատում, որի արդյունքում դուրս են բերվել քոլեջի հնարավոր ուժեղ և թույլ կողմերը: Ըստ ձևաչափի՝ պատրաստվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկ՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողները փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել են փորձագիտական այցի ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, դասալսումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին երկու մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված արդյունքի ձեռքբերմանը:

Քանի որ փորձագիտական այցերը եղել են առցանց և փորձագիտական խումբը չէր կարող այցեր կատարել հաստատության ստորաբաժանումներ, այդ իսկ պատճառով ժամանակացույցում ներառված են եղել նաև հանդիպումներ, որի մասնակիցներին կարող էր ընտրել փորձագիտական խումբը, այս հանդիպումները թույլ են տվել փորձագետներին լրացնել այն տեղեկատվությունը, որը, ըստ փորձագետների, թերի կամ ոչ միանշանակ է եղել:

Նախնական այց

Պայմնավորված COVID 19 համավարակով՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց 2020 թվականի նոյեմբերի 16-ին zoom հարթակում, հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողները, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցերի պլան-ժամանակցույցը, ներկայացվել է լրացուցիչ ուսումնասիրության փաստաթղթերի ցանկը և համավարակի պայմաններում առցանց փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները (քոլեջի կողմից տեսանյութերի տրամադրում, որտեղ կերևա քոլեջի հիմնական ռեսուրսային բազան՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաներ և այլն, քոլեջի կողմից փորձագետների կողմից պահանջված ուսումնասիրվող փաստաթղթերի առցանց տարբերակի ապահովում պատշաճ ժամկետներում, առցանց միջավայրում փարձագիտական այցերի տեխնիկական կանոնների ապահովում՝ տեսախցիկների միացված լինելը, մեկ ընդհանուր տեսախցիկի պարագայում ողջ սենյակը տեսնելու հնարավորությունը, սենյակում բացի թիրախային խնմբերից այլ անձանց առկայության բացառումը և այլն):

Հանդիպմանը փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են կազմակերպչական այն բոլոր հարցերը, որոնք պետք է ապահովվեին քոլեջի կողմից, առցանց հավատարմագրման համար: Նախապես պլանավորված եռօրյա այցը վերածվել է քառօրյա այցի, պահպանելով ընդհանուր աշխատաժամաքանակը:

Փորձագիտական առցանց այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը (30.11.2020թ.) փորձագիտական խմբի անդամները և համակարգողը ունեցել են առցանց հանդիպում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը մեկ անգամ ևս համաձայնեցրել է փորձագիտական գնահատման շրջանակը, չափանիշների գնահատման սանդղակը, որն ըստ ՈԱԱԿ-ի ընթացակարգերի՝ ներառում է երկու մակարդակ՝ 1) բավարարում է չափանիշի պահանջներին, 2) չի բավարարում չափանիշի պահանջներին: Վերջնականացվել են այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, հաստատության ուժեղ և թույլ կողմերն ըստ

չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հանդիպումների վարման էթիկան, հստակեցվել են հետագա քայլերը:

Փորձագիտական առցանց այցը տեղի է ունեցել 2020թ.-ի դեկտեմբերի 1-ից 4-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական առցանց այցը պետք է մեկնարկեր և ավարտվեր քոլեջի տնօրենի հետ հանդիպմամբ, սակայն քոլեջի տնօրենի առողջական խնդրի պատճառով հանդիպումները տեղի չեն ունեցել: Քոլեջի հետ հանդիպման մեկնարկը եղավ 2 փոխտնօրենների հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ կառավարման խորհրդի, ուսումնամեթոդական խորհրդի, դասախոսների, ուսանողների, շրջանավարտների, գործատուների, 3 ՄԿԾ-ների դասախոսական և ուսանողական կազմից մասնակիցներին ընտրել է փորձագիտական խումբը՝ քոլեջի կողմից նախօրոք տրամադրված ցանկերից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը իրականացրել փաստաթղթերի ուսումնասիրություն[3], առցանց ռեսուրսների ուսումնասիրում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության՝ նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական առցանց այցից հետո փորձագիտական խումբը քննարկումների արդյունքում պատրաստել է փորձագիտական զեկույցը, որը կազմելիս հիմնվել է քոլեջի ինքնավերլուծության գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Խմբի ղեկավարը գործընթացի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դիտարկումների շարադրման գործում, ինչպես նաև արձագանքել ամբողջական տարբերակին: Փորձագիտական խմբի անդամների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ՇՏՊՔ-ն ուղարկել է ՈԱԱԿ 13.01.2021: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝քոլեջը չի ներկայացրել առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 29.01.2021թ.:

Լիլիթ Զաքարյան,
Գործընթացի համակարգող
29.01.2021 թ.

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը (նախկին Լենինականի հաստոցագործիքաշինական տեխնիկումը) հիմնադրվել է 1960թ.: 1985թ. այն վերանվանվել է Լենինականի պոլիտեխնիկումի, 1999թ.՝ Լենինականի պոլիտեխնիկական քոլեջի, 2001թ.՝ Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջի: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի թիվ 199 –Ն որոշման 1-ի կետի 3-րդ ենթակետը՝ Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջը վերանվանվել է Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, այնուհետև ընդգրկվել Եվրոպական Միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված 12 բազմագործառութային քոլեջների ցանկում:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրեր:

Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում հիմնական կրթության հիմքով՝ թվով երեք՝ մասնագիտություններով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, համակարգչային ցանցեր», «Հագուստի մոդելավորում և նախագծում», և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով՝ թվով երեք՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Սոցիալական աշխատանք», «Զբոսաշրջություն» մասնագիտությաուններով, ինչպես նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում հիմնական կրթության հիմքով թվով երկու մասնագիտություններով՝«Համակարգիչների շահագործում», «Խոհարարական գործ» և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով «Գովազդ», մասնագիտությունով:

Քոլեջում իրականացվում են Դուալ կրթական ծրագրեր «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Զբոսաշրջություն» մասնագիտություններով:

Քոլեջը ապահովված է իր մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական կազմով, որոնցից շատերը մասնագիտական ոլորտում աշխատանքային փորձ ունեն, անցել են վերապատրաստումներ, բավականաչափ մոտիվացված են: Քոլեջի դասախոսական կազմը պարբերաբար երիտասարդացվում է, պահպանելով լավագույն որակավորումներով առավել փորձառու կադրերին: Դասախոսներից ոմանք վերապատրաստում են անցել նաև միջազգային ծրագրերով: Որոշ մասնագիտությունների բարելավման համար քոլեջը սերտ կապեր է հաստատել գործատուների հետ: Դա հատկապես վերաբերվում է Դուալ ծրագրով:

Քոլեջը ուսումնական գործընթացը կազմակերպում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները բազմազան են, հիմնականում ուսանողակենտրոն: Համաճարակի պայմաններում քոլեջում հատկապես հարստացան կիրառվող ուսումնառության մեթոդները, փոփոխություններ եղան ուսանողներին տրվող հանձնարարականներում:

Քոլեջի կրթական միջավայրը բավական բարենպաստ է ուսումնառության համար, հատկապես լավ է գործում կուրսղեկների ինստիտուտը, որի միջոցով վեր են հանվում ուսանողների կարիքները, լուծվում խնդիրները:

ՇՏՊՔ-ն դեռևս չի հստակեցրել ինչ է իր համար հետազոտությունը, քոլեջում առկա չեն ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման հաստատված մեխանիզմներ, սակայն որոշ մոդուլների մասով կուտակվել է այդպիսի փոխկապակցման դրական փորձ: Հանձնարարականների մի մասը ուսանողների մոտ զարգացնում է ստեղծագործական ջիղը, ինքնուրույն մտածելակերպը:

Շիրակի տարածաշրջանային պետական Քոլեջում չկա արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ստորաբաժանում, չկա միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, իսկ իրականացված ծրագրերը գործում են ի շնորհիվ անձային կապերի, այլ ոչ հստակ մշակված մեխանիզմների և/կամ ընթացակարգերի: Նաև հաշվի առնելով Քոլեջում օտար լեզուների իմացության ցածր ցուցանիշը և դրա բարձրացմանը նպաստող գործընթացների բացակայությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը չի բավարարում տվյալ չափանիշի պահանջներին:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում չկա արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ստորաբաժանում, մշակված չէ միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն և ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Քոլեջում օտար լեզուների իմացության ցուցանիշը ցածր է և դրա բարձրացմանը նպաստող ծառայություններ չեն մատուցվում:

ՇՏՊՔ որակի ներքին ապահովման համակարգը գտնվում է դեռ ներդրման փուլում, վերջինս չունի ազդեցություն քոլեջի գործընթացների վրա և չի ապահովում քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավումն ու որակի մշակույթի ձևավորումը: Քոլեջում չեն իրականացվում նաև բավարար աշխատանքներ ներքին շահակիցների շրջանում ՈԱ համակարգի վերաբերյալ տեղեկացվածության ապահովման նպատակով:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

ՇՊՏՔ ՊՈԱԿ-ը գործունեությունն իրականացնում է իր կանոնադրության հիման վրա, ունի 2016-2021թթ. ռազմավարական ծրագիր, որը հաստատվել է 2016 թ.-ին: ՇՏՊՔ-ն ռազմավարական ծրագրում սահմանված քոլեջի առաքելություն է. «ՇՊՏՔ ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից՝ քոլեջը խթանում է իր ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը: Քոլեջը մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ուսուցման, հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ քոլեջը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի և ղեկավար դերի համար, մասնագիտական կարիերայի և հարատև ուսումնառությանը՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան»:

Փաստաթղթում նաև արտացոլված են 3 ռազմավարական նպատակներ և 6 աջակցող նպատակներ իրենց խնդիրներով, որոնք արտացոլում են առաքելությունը: Ռազմավարական նպատակներն են. 1.Բարձրորակ կրթություն, 2.Մասնագիտական ոլորտի ուսումնասիրություններ, հետազոտություններ և նորարարություններ, 3.Հանրային ներգրավում և ծառայություն: Աջակցող նպատակներն են. որակյալ կադրային ներուժ, որակյալ ենթակառուցվածքներ, կրթական և այլ ծառայություններ, ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն, ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում, ռազմավարական գործակցություն և միջազգայնացում:

Տարբեր փաստաթղթերում (2016-2021թթ Ռազմավարական ծրագիր, 2018-2020թ. գործողությունների ծրագիր, 2021-2023թթ զարգացման ռազմավարական ծրագիր, ուսանողի ուղեցույց և այլն) քոլեջի առաքելությունը տարբեր կերպ է շարադրված և առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կհիմնավորի փոփոխության անհրաժեշտությունը, հիմնավորումը: 2016-2021թթ Ռազմավարական ծրագրում այն շատ հավակնոտ է: Քոլեջը հանդես է գալիս ոչ միայն գիտելիք տարածող և փոխանցող, այլ նաև ստեղծող, 2021-2023 թթ. ռազմավարական պլանում գիտելիք ստեղծելու հայտը այլևս ներկայացված չէ: Մի առաքելության մեջ կարևորվում է հետազոտություններ անելը և դրանց միջազգայնացումը, մյուսում՝ այն ներկայացվում է ավելի համեստ և իրատեսական: Առաքելությունների բոլոր տարբերակներում շեշտված է տարածաշրջանում քոլեջի կարևոր գործառույթը և աշխատաշուկայի պահանջների համար որակյալ կադրեր պատրաստելը: 2016-2021 թթ. ՌԾ-ն չունի իրականացման պլան, առկա չեն հստակ մեխանիմներ և ընթացակարգեր ՌԾ իրականացման համար:

Քանի որ ՇՊՏՔ ռազմավարական ծրագիրը հանդիսացել է քոլեջի տնօրենի նախընտրական ծրագիրը, այդ պատճառով արտաքին և ներքին շահակիցները անմիջականորեն ներգրավված չեն եղել քոլեջի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման գործընթացում, սակայն հանդիպումները ցույց տվեցին, որ նրանք ակտիվորեն ընդգրկված են քոլեջի զարգացման, բարեփոխման գործընթացներում: Հանդիպումների արդյունքում պարզվեց, որ գործատուները քոլեջի տնօրենի հետ հնարավորություն են ունեցել քննարկել գործատուների կարիքները, սակայն դրանք չեն արտացոլվել 2016-2021 թթ. ՌԾ-ում: Չնայած դրան կան քոլեջ-գործատու

սերտ համագործակցության հաջողված օրինակներ՝ «Գովազդ» մասնագիտությունը քոլեջը բացել է «Ցայգ» հեռուստաընկերության տնօրենի առաջարկով, որոշ շրջանավարտներ արդեն աշխատանք են գտել այդ կազմակերպությունում: Հաջողված գործընկերային հարաբերություններ էին նաև ձևավորվել դուալ պիլոտային կրթական ծրագրերում, որտեղ գործատուներն ակտիվ ներգրավված են եղել ինչպես կրթության բովանդակության մշակման, պրակտիկաների կազմակերպման, այնպես էլ դասավանդման գործընթացներում:

ՇՏՊՔ-ի ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխանող մասնագիտությունների մեծ մասը համահունչ են Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման և քաղաքի զարգացման 5-ամյա ծրագրերին:

Քոլեջն իրականացնում է արտաքին շահակիցների կարիքների վերհանում և գնահատում, մշակել է շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ, անցկացվել հարցումներ, որոնք, ինչպես պարզվեց փորձագիտական առցանց այցից, չեն վերլուծվել: Գործատուների դիտողությունները և առաջարկությունները պարբերաբար քննարկվել են քոլեջի տնօրենի հետ:

Քոլեջում առկա է բոլոր ստորաբաժանումների կողմից տարեկան, կիսամյակային պլանավորման և համապատասխանաբար հաշվետվողականության մեխանիզմ, սակայն դրանք ոչ միշտ են փոխկապված ՌԾ-ի նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետության գնահատման հետ: Հաշվետվությունները հիմնականում արձանագրում են կատարված աշխատանքները, խնդիրները և փաստերը, չեն կրում վերլուծական բնույթ, ավելի շատ տեղեկատվական բնույթի են, չեն պարունակում բավարար տվյալներ ՌԾ արդյունավետության գնահատման համար: Քոլեջում մինչ այժմ չի գնահատվել և վերլուծվել, ՌԾ-ով ամրագրված նպատակների իրականացումը:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, հաշվի առնելով նախորդ ՌԾ ոչ իրագործելի լինելու փաստը 2020թ. վերանայել է այն, դարձնելով ավելի չափելի և իրատեսական, ինչը կնպաստի ծավալած գործունեության և առաքելության առավել համահունչությանը:

2016-2023 թթ. ՌԾ-ի նպատակների իրականացումը և դրա արդյունավետությունը գնահատող ցուցիչներ չկային, քոլեջը երբևէ չի արել ՌԾ կատարողականի գնահատում, ինչը ռիսկային է դարձրել քոլեջի որդեգրած առաքելության և նպատակների իրականացումը, սակայն 2021-2023 թթ. ՌԾ-ում քոլեջը սահմանել է վերջնարդյունքներ և դրանց ստուգման ցուցիչներ, մշակել է գործողությունների պլան, որը կարող է նպաստել ռազմավարական արդյունավետ կառավարմանը և նպատակների իրականացման պարբերաբար գնահատմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի ղեկավարությունը ակտիվորեն համագործակցում է գործընկեր գործատուների հետ, ինչը դրականորեն է անդրադառնում կրթական ծրագրերի իրականացման վրա: Գործատուները ընդհանուր առմամբ բավարարված են իրենց համագործակցությամբ: Սակայն ներքին շահակիցները առավել թույլ են ներգրավված, ինչի հետևանքով կնրանց արիքները արտացոլված չեն ՌԾ-ում:

Քոլեջի 2016-2021թթ. ՌԾ-ում սահմանված առաքելությունը շատ հավակնոտ էր ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի համեմատությամբ և իր գործունեությամբ և առկա ռեսուրսներով չէր կարող ապահովել այն: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը 2021-2023թթ. ՌԾ-ում վերանայել է իր առաքելությունը՝ համապատասխանացնելով տարածաշրջանում իր տեղին և դերին:

Փորձագիտական խմբի վերլուծությունները ցույց տվեցին, որ քոլեջի գործունեության մեջ չի կարևորվել ռազմավարական պլանավորումը, այն հիմնականում մշակվել է որպես լիազոր մարմնի պահանջ: Փորձագիտական խումբը ողջունում է, որ հավատարմագրմանը նախապատրաստվելու ընթացքում քոլեջի կառավարման մարմինները վերաիմաստավորել են փաստաթղթի գործառնական նշանակությունը: Որպես ապացույց կարելի է դիտել, որ վերջի ռազմավարական ծրագիրը ներառում է նաև «Գործողությունների պլան», հստակ ժամկետներով, պատասխանատուներով, վերջնարդյունքներով, ստուգման ցուցիչներով, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսներով:

Քոլեջում իրականացվել են շահակիցների կարիքների վերհանմանն ուղղված հարցումներ, սակայն պատասխանատուները հստակ չեն պատկերացրել գործիքի կիրառման նպատակը և կարևորությունը, այդ պատճառով հարցումները չեն արվել կայուն պարբերականությամբ, չեն վերլուծվել, դրանց արդյունքները չեն ծառայել բարելավմանը: Այնուամենայնիվ փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն, որ քոլեջը իրականացրել է առաջին քայլերը, մշակելով շահակիցների կարիքների վերհանման որոշ մեխանիզներ և գործիքներ, որոնք կնպաստեն կարիքների արտացոլմանը առաջիկա ռազմավարական պլանավորման մեջ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի գործունեությունը և վերանայված առաքելությունը համապատասխանում են տարածաշրջանի պահանջներին, դրանից բխող նպատակները և դրանց հասնելու ուղղությամբ պլանավորված քայլերը, արտաքին և ներքին շահակիցները միջնորդավորված մասնակցություն ունեն ռազմավարական ծրագրի մշակման և իրագործման փուլերում, արտաքին շահակիցները կարևորում են քոլեջի առաքելությունը, քոլեջի ծավալած գործունեությունը հիմնականում համապատասխանում է առաքելությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կանոնադրության համաձայն քոլեջի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը և գործադիր մարմինը՝ տնօրենը: Քոլեջի կանոնադրությամբ նախատեսվում է կոլեգիալ և միանձնյա կառավարման սկզբունքների զուգակցում:

Քոլեջի կոլեկտիվ կառավարման մարմիններն են Կառավարման խորհուրդը, Մանկավարժական խորհուրդը, Ուսումնամեթոդական խորհուրդը, որոնք գործում են իրենց կանոնակարգերի համապատասխան: Քոլեջում ինքնակառավարման սկզբունքով գործում է Ուսանողական խորհուրդը:

Ուսումնական գործընթացների, ֆինանսական և տնտեսական գործունեության վարչարարությունն ու կառավարումն իրականացվում են վարչական և տնտեսական

պատասխանատուների միջոցով: Աշխատանքի համար անհրաժեշտ ռեսուրսների հայտերը հիմնականում ներկայացվում են փոխտնօրեններին բանավոր: Քոլեջի ֆինանսական միջոցները ձևավորվում են հիմնականում պետական բյուջեից, ուսման վարձավճարներից, նաև տարբեր դրամաշնորհային և կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունքում: Քոլեջն անհատույց օգտագործման իրավունքով տիրապետում է գույքի, շենք-շինությունների:

Որոշումների կայացման գործընթացները ՇՏՊՔ-ում կանոնակարգված են համապատասխան փաստաթղթերով: Քոլեջում որոշումների կայացումը կանոնակարգվում է «Աշխատողների ներքին կարգապահական կանոններ» փաստաթղթին համապատասխան, սակայն դրանում էթիկայի կանոններ սահմանված չեն: Քոլեջում մշակվել է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի վարչական մասի և դասախոսների բարեվարքության կանոնները» փաստաթուղթը, որը դեռ հաստատված չէ:

Հաստիքացուցակի բոլոր հաստիքները համալրված են համապատասխան աշխատակիցներով, սակայն ոչ բոլոր հաստիքների համար են մշակված աշխատանքի բնութագրիչներ /պաշտոնի անձնագրեր:

Քոլեջի կառավարման համակարգը, գործող կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս ընդգրկվելու կառավարման տարբեր մարմինների կազմերում և անմիջականորեն կամ միջնորդավորված մասնակցելու կառավարման գործընթացներին: Փորձագիտական առցանց այցից պարզ դարձավ, որ քոլեջի Խորհրդում ընդգրկված թե դասախոսները (երկու դասախոս), և թե ուսանողները (երեք ուսանող) մասնակցություն են ունենում Խորհրդի նիստերին, սակայն ակտիվ չեն հարցերի բարձրացման և այլ դասախոսներին և ուսանողներին տեղեկացնելու առումով: Ուսանողների ցածր տեղեկացվածության հետևանքով նրանք լիարժեք չեն մասնակցում որոշումների կայացմանը, որը մասամբ գալիս է Ուսանողական խորհրդի ոչ լիարժեք աշխատանքից:

Բոլոր դասախոսներն ընդգրկված են Մանկավարժական խորհրդում, իսկ ոմանք նաև՝ Ուսումնամեթոդական խորհրդում, որտեղ բարձրացնում են իրենց հուզող հարցերը: Կառավարման այս մակարդակի խորհրդներում որոշումները ընդունվում են ավելի մասնակցային սկզբունքով, քանի որ հիմնականում վերաբերվում են ուսումնական գործընթացին: Քոլեջում առկա չէ որոշումների կայացման գործընթացից դասախոսների և ուսանողների բավարարվածության գնահատում:

Այն բացի երկարաժամկետ պլանավորումից 2010 թ.-ից իրականացնում է միջնաժամկետ պլանավորում 3 տարով և առկա են 2010-2012, 2013-2015, 2015-2017, 2018-2020թ. գործունեության ծրագրերը: Քոլեջը իրականացնում է երկարաժամկետ և միջնաժամկետ պլանավորում, իսկ ստորաբաժանումների մակարդակով՝ տարեկան (կարճաժամկետ) պլանավորում: Փաստաթղթերի վերլուծություններից պարզ դարձավ, որ միջնաժամկետ ծրագրերը հիմնականում փոխկապացված չեն քոլեջի ռազմավարական ծրագրին: Միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակների իրականացման և մշտադիտարկման մեխանիզմներ քոլեջը չի սահմանել՝ դեռևս մշտադիտարկումների և պլանների իրականացման վերաբերյալ հաշվետվություններ չեն ներկայացվում: Կարճաժամկետ պլանավորումն իրենից ներկայացնում է առանց վերջնարդյունքների և առանց ֆինանսական ապահովման պլանավորում՝ ուսումնական հարցերի ժամանակացույցերի տեսքով: Քոլեջում առկա է հստակ հաշվետվողականություն ներքևից վերև սկզբունքով, սակայն հաշվետվությունները չունեն վերլուծողական բնույթ:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց նաև, որ քոլեջում գործող մասնագիտական ամբիոնները վերակազմավորվել են հանձնաժողովների, իսկ վերջիններս էլ Ուսումնամեթոդական խորհուրդի առանց հստակ հիմնավորման:

Քոլեջը փորձեր է իրականացնում կառավարման, մասնագիտությունների իրագործման, դասավանդման, ուսումնառության մեթոդների արդյունավետությունը գնահատելու նպատակով ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացնել հարցումներ, որոնք սակայն չեն վերլուծվում, կառավարման մարմինների կողմից չեն քննարկվում:

Քոլեջի գործունեության հրապարակայնությունն ապահովում է հիմնականում ֆեյսբուքյան էջը, սոցիալական ցանցերի, բուկլետների միջոցով, որտեղ տեղակայված են նյութեր քոլեջի ուսումնական գործընթացներների վերաբերյալ, իսկ պաշտոնական կայքէջի գործունեությունը ընդհատվել է: Տարածվող նյութերում բացակայում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ որակական և քանակական տվյալները: Քոլեջը չունի հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմներ:

Դատողություններ: Դրական է, որ ՇՏՊՔ-ն ջանքեր է գործադրում կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ, բոլոր կառավարման մարմիններն ունեն իրենց կանոնակարգերը: Փորձագիտական խմբի վերլուծությամբ քոլեջը կրթական գործունեություն իրականացնելու համար հիմնականում ապահովված է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով, սակայն դրանք չեն համապատասխանում քոլեջի գործող ՌԾ-ով (2016-2021թթ.) սահմանված առաքելությանը և նպատակներին: Քոլեջի կառավարման մարմինները ջանքեր են գործադրել բարելավելու համար ռեսուրսային բազան, դասավանդման և ուսումնառության համակրգերը: Մի քանի տարի առաջ քոլեջի նյութական ռեսուրսները նորացվել են (համակարգչային ֆոնդը, ծրագրերը, ինտերնետ կապը): Քոլեջն ունի ձեռքբերումներ նաև գործատուների հետ իր հարաբերություններում: Սակայն առաքելության մեջ նշված ուսուցման և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում գերազանցության ու նորարարության կենտրոն դառնալու, շրջանավարտներին գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի պահանջների համապատասխան պատրաստելու համար քոլեջը պետք է ապահովված լիներ մեծ ֆինասական միջոցներով և նյութատեխնիկական բազայով, ունենար վերապատրաստված հզոր մարդկային ներուժ, կիրառած լիներ բենչմարքինգի մեխանիզմը, նպաստավոր պայմաններ ստեղծած լիներ դասախոսների և ուսանողների փոխանակման համար: Մինչդեռ քոլեջի առկա ռեսուսները այդ հնարավորությունը չեն ընձեռում:

Նույն պատճառով քոլեջին չի հաջողվել «նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ» ստեղծել հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար, ինչպես նշված է ՌԾ նպատակներում, խթանել «հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել քոլեջի ինտեգումը Եվրոպական հետազոտական տարածքին»: Չի իրականացվել նաև որակի ներքին համակարգի ներդրման նպատակը: Փաստորեն ռազմավարական ծրագիրը ըստ էության չի իրագործվել և դա կառավարման մարմինների խնդիր է: Թեպետ կառավարման անձնակազմի հավաստմամբ քոլեջը պետք է մասնակցի որոշ դրամաշնորհային ծրագրերի, որոնց շրջանակում նախատեսում է համալրել և նորացնել նյութական ռեսուրսները, սակայն այս պահի դրությամբ դրանք բացակայում են:

Քոլեջում աշխատանքային հարաբերությունները կանոնագարգվում են հաստատված ներքին կարգապահական կանոններով, սակայն էթիկայի սահմանված կանոններ դեռևս չկան:

Քոլեջի կառավարման հիմքում հաճախ դրված են լիազոր մարմնի կողմից մշակված ձևաչափերը, որոնք քոլեջը պետք է ադապտացնի և ձևափոխի իր պայմաններին

համապատասխան: Սակայն ավելի հաճախ այդ փաստաթղթերը անփոփոխ են մնում, որը վտանգում է քոլեջի առանձնահատկություններին համապատասխան և գործուն փաստաթղթերի մշակումն ու իրականացումը:

Դրական է, որ քոլեջի կառավարման համակարգը, գործող կանոնակարգերը հնարավորություն են տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, սակայն դասախոսների և հատկապես ուսանողների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ նրանց նախաձեռնողականությունը ցածր է: Դրա հետևանքով երբեմն ընդունվում են որոշումներ, որոնք ոչ բոլոր աշխատակիցների կողմից են ընկալվում: Օրինակ, տարբեր խմբերի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ամբիոնների/մասնագիտական հանձնաժողովների վերացումը կոլեկտիվի կողմից չի ընկալվել: Փորձագիտական վերլուծությունից պարզ դարձավ, որ ամբիոնային համակարգը գործել է արդյունավետ և ոչ ֆորմալ այսօր դեռ շարունակում է գործել: Նոր ձևավորված Ուսումնամեթոդական խորհուրդը ամբողջությամբ չի լրացնում ամբիոնների պակասը:

Փաստաթղթերի վերլուծություններից պարզ դարձավ, որ կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը հիմնականում փոխկապակցված չեն քոլեջի ռազմավարական ծրագրին: Կատարողականին ուղղված ներքին մշտադիտարկման և գնահատման համակարգի բացակայությունը հնարավորություն չի ընձեռում գնահատել երկարաժամկետ և միջնաժամկետ պլանների իրականացման արդյունավետությունը: Փորձագիտական խմբի դիտարկմամբ այդ նպատակին չի ծառայում նաև հաշվետվողականության մեխանիզմը: Հաշվետվությունները ներքևից վերև կանոնավոր կերպով ներկայացվում են, սակայն դրանք չունեն վերլուծական բնույթ և չեն ներառում գնահատման տարրեր, փոխկապակցված չեն ռազմավարական նպատակներին: Ավելին, փորձագիտական խումբը փաստում է, որ երբեմն հաշվետվություններում հատվածներ կան, որ տարեց տարի նույնությամբ կրկնվում են, ինչը խոսում է դրանց, որպես գնահատող մեխանիզմի, ցածր արդյունավետության մասին (Օրինակ, 2018 և 2019 թթ. քոլեջի տարեվերջյան հաշվետվությունները): Մինչդեռ վերևից ներքև վերլուծական բնույթի հաշվետվողականության մեխանիզմի կատարելագործումը կարող է նպաստել քոլեջի ուժեղ և թույլ կողմերի բացահայտմանը, քոլեջի նպատակների շուրջ աշխատակիցների համախմբմանը և բարելավումների իրականացմանը:

Տվյալների հավաքագրման գործընթացներն ուղղակիորեն փոխկապակցված չեն ռազմավարական ծրագրեր մշակելու կամ վերանայելու գործընթացներներին, դրանք կանոնակարգված չեն: Մտահոգիչ է, որ ՊԻԳԲ շրջափուլը, որպես կառավարման համակարգի բարելավման մշակույթ և սկզբունք, ընկած չէ քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացնելու հիմքում, ինչը ռիսկի տակ է դնում կառավարման համակարգի արդյունավետությունը: Փորձագիտական խումբն այդ սկզբունքը միայն տեսավ դասալսման մեխանիզմի մեջ, որը նպաստում է դասավանդման շարունակական բարելավմանը: Բայց նույնիսկ այդ պարագայում գնահատման մեխանիզմները լիարժեք չեն գործում:

ՄՈՒՀ-ը լիարժեք չի կատարում իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, հստակ մեխանիզմ և ընթացակարգեր դրա համար մշակված չեն, որը վտանգում է հավաստի տվյալների հիման վրա որոշումների կայացումը:

ՇՏՊՔ-ում բացակայում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմները, ինչը թուլացնում է քոլեջի դիրքերը կրթական շուկայում և պակասեցնում նրա տեսանելիությունը աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը, վերլուծելով ստեղծված իրավիճակը, եկավ այն եզրակացության, որ քոլեջում բացակայում է ռազմավարական կառավարումը և գերակշռում է իրավիճակայինը. Ինչը համակարգված և արդյունավետ կառավարման համակարգի բացակայության արդյունք է:

Դրական է, որ քոլեջում առկա են աշխատակազմ-ուսանող անկաշկանդ հարաբերություններ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին անմիջական կամ կուրսղեկների միջոցով շփում ունենալ կառավարման օղակների հետ, բարձրացնել իրենց հուզող հարցերը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսները ոչ ամբողջությամբ են համապատասխանում քոլեջի ռազմավարական նպատակների իրականացմանը, առկա չեն կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություններ, որոշումները չեն կայացվում հավաքագրված, վերլուծված և գնահատված տվյալների հիման վրա, կառավարումը իրավիճակային բնույթ է կրում, որակի կառավարման սկզբունքը ընկած չէ քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացնելու հիմքում, փորձագիտական խումբը գտնում է, որ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը չի բավարարում չափանիշի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում հիմնական կրթության հիմքով՝ թվով երեք՝ մասնագիտություններով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, համակարգչային ցանցեր», «Հագուստի մոդելավորում և նախագծում», և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով՝ թվով երեք՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Սոցիալական աշխատանք», «Զբոսաշրջություն» մասնագիտությաուններով, ինչպես նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում հիմնական կրթության հիմքով թվով երկու մասնագիտություններով՝ «Համակարգիչների շահագործում», «Խոհարարական գործ» և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով «Գովազդ», մասնագիտությունով: 2009 թվականից քոլեջում ներդրվել է ուսուցման կազմակերպման մոդուլային համակարգը:

2017-2018 ուսումնական տարվանից դուալ կրթական ծրագրերով է իրականացվում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունը (Գյումրիի տեղեկատավական տեխնոլոգիական կենտրոնի, «ԲրեյնՖորս» և «ԻնստիգեյթԴիզայն» ընկերությունների քոլեջի հետ կնքված երկկողմանի փոխըմբռնման հուշագրի հիման վրա), իսկ 2018-2019 ուսումնական տարվանից՝ «Զբոսաշրջություն» մասնագիտությունը:

ՄՈՒՀ-ում իրականացվող բոլոր ուսումնական պլանները մշակվել են ՀՀ Կառավարության կողմից հաստատված միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա: Քոլեջում մասնագիտությունները ներդնելիս փորձել են հաշվի առնել մարզի

աշխատաշուկայի կարիքները, սակայն դրանք արվել են առավելապես բանավոր քննարկումների միջոցով, այդ ուղղությամբ համապարփակ վերլուծություններ քոլեջը դեռևս չի իրականացրել: Գյումրու ԶՏԿ տնօրենը քոլեջի Կառավարման խորհրդի նախագահն է, իսկ քոլեջի տնօրենը Գործատուների խորհրդի անդամ: Պետք է փաստել, որ գործատուների հետ համագործակցության արդյունքում քոլեջում ներդրվել է «Գովազդ» մասնագիտությունը, որի մի շարք մոդուլներ մշակվել են քոլեջի աշխատակիցների և գործընկեր «Ցայգ» մարզային հեռուստաընկերության համատեղ ուժերով, որտեղ և իրականացվում է մասնագիտական առարկաների դասավանդումը: Նման դասընթացների միջոցով համադրվում են տեսական-գործնական գիտելիքները՝ ուսանողի մոտ ձևավորելով տեսական գիտելիքներ, հմտություններ, կարողություններ:

Փորձագիտական խմբի կողմից անցկացված դասալսումները, ուսումնասիրված փաստաթղթերը ցույց տվեցին, որ տեսական դասընթացների ընթացքում կիրառվում են տարբեր ինտերակտիվ մեթոդներ (նյութի քննարկում, բանավեճ, սոցիալական դեպքի ներկայացում, զբոսաշրջային փաթեթի SWOT վերլուծություն, շնորհանդեսներ, խմբային աշխատանքներ): Գործնական պարապմունքները իրականացվում են լսարանում, պրակտիկայի ընթացում և տանը արվող հանձնարարությունների (զբոսաշրջային փաթեթի ստեղծում, վեբ-կայքի ստեղծում, ֆիրմայի համար ցանցի կառուցում, նորաձև նմուշների մոդելավորում, կուրսային աշխատանքների, նախագծերի կատարում և այլն) միջոցով: Կարևոր է, որ հանձնարարականներին դասախոսներն արձագանքում են դատողություններ անելով, թույլ և ուժեղ կողմերը նշելով, ձևավորող և ամփոփիչ գնահատմամբ:

Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված կրթական ծրագրերի միջև բովանդակային կրկնություններ հիմնականում չկան, իսկ առարկաների բովանդակային հաջորդականությունը պահված է: Ամբիոններում /այժմ՝ Ուսումնամեթոդական խորհրդում/ քննարկվում են դասալսումների արդյունքները, դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները, ինչը նպաստում է գործընթացների բարելավմանը:

Դասավանդվող բոլոր մոդուլների համար նկարագրված են նպատակները և ուսումնառության արդյունքները՝ միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների համաձայն: Մոդուլների յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված են ուսուցման մեթոդներ, որոնք արտացոլվում են յուրաքանչյուր դասախոսի կողմից կազմվող մոդուլային ուսումնական ծրագրերում: Մոդուլային ուսումնական ծրագրերի հիման վրա դասախոսները կազմում են թեմատիկ պլաններ, այնուհետ՝ ուսումնառության պլաններ, որոնց իրագործումը վերահսկվում է վերադաս մարմինների կողմից:

Մոդուլային ուսումնական ծրագրերում նշված ակնկալվող արդյունքների շեշտադրումներում հաճախ գերակշռում են տեսական գիտելիքները: Այլ է պատկերը դուալ կրթությամբ մասնագիտություններում, որտեղ գերակշռում է գործնական բաղադրիչը, ինչը հաստատեցին դասախոսները, ուսանողները և գործատուները: Գործող մասնագիտությունների հատուկ մասնագիտական մոդուլների շրջանակում առկա հանձնարարականներում մանրամասն նկարագրված են աշխատանքները և համապատասխանում են մոդուլի ուսումնառության արդյունքներին: Ուսումնական պլանում կան ընտրովի առարկաներ (ՊԿՉ -ի համաձայն), որոնք սակայն ընտրվել են ամբիոնների կողմից, ուսանողները դրանց ընտրությանը չեն մասնակցում: Միայն «Զբոսաշրջություն» մասնագիտության դեպքում ընտրությանը մասնակցել են նաև ուսանողներն ու գործատուները:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ «Զբոսաշրջություն» մասնագիտությունը բացվել է պոտենցիալ դիմորդների կարիքների հիման վրա, քանի որ շատ դիմորդներ բաց դռների օրը կամ դիմումներ ներկայացնելիս հետաքրքրված են եղել այդ մասնագիտությամբ, ինչպես նաև, որ քոլեջում ստացած կրթությունը համապատասխանի ուսանողների և շրջանավարտների սպասումներին և կարիքներին:

Համաձարակի պայմաններում առցանց ուսուցման անցնելու հետ կապված քոլեջն ունեցել է որոշ դժվարությունները, որոնք ստիպել են դասախոսներին վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդները, մշակել հանձնարարականների նոր փաթեթներ նկարագրված ուսումնառության արդյունքների ապահովման համար: Դասախոսների մի մասը վերապատրաստում է անցել տեղական և միջազգային տարբեր ծրագրերով և ստացված գիտելիքներն, ուսուցման մեթոդները և հմտությունները կիրառել են առցանց ուսուցման ընթացքում:

Քոլեջում կիրառվում են ուսանողի գնահատման հետևյալ մեթոդները՝ բանավոր հարցումներ, գործնական և տնային առաջադրանքներ, թեստային առաջադրանքներ, սեմինար պարապմունքներ, եզրափակիչ քննություններ, ռեֆերատներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների, նախագծերի պաշտպանություն և այլն: Կարողությունների գնահատման համար կիրառվում են գործնական առաջադրանքներ, օրինակ, վեբ-կայքի պատրաստում, զբոսաշրջության փաթեթի նախապատրաստում և դրա թիմային SWOT վերլուծություն, որևէ լեգալի պատրաստում կամ կարի պատրաստի արտադրանքի նմուշի ստեղծում և այլն: Քոլեջը զուգակցում է ձևավորող և ամփոփիչ գնահատման մեթոդները: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզվեց, որ ուսանողները ոչ միշտ են տեղեկացված գնահատման չափանիշների վերաբերյալ, սակայն գնահատումից հետո դասախոսները ուսանողների համար հիմնավորում են դրա արժանահավատությունը, բացի այդ, հարկ եղած դեպքում, նրանց հնարավորություն է տրվում բարելավել արդյունքները: Կան մոդուլային ուսումնական ծրագրեր, օրինակ «Մոդելավորող-նախագծող՝ հագուստի» որակավորման ծրագիրը, որտեղ ներկայացվում է ամեն մի մոդուլի ուսումնառության արդյունքները, կատարման չափանիշները և ամենայն մանրամասնությամբ նկարագրված են գնահատման միջոցները: Սակայն կան նաև մոդուլային ծրագրեր, որտեղ դրանք նկարագրված չեն նույն մանրամասնությամբ:

Քոլեջում մշակվել են «Ամփոփիչ պետական քննությունների կազմակերպման և անցկացման» և «Ամփոփիչ դիպլոմային աշխատանքների նախագծման և պաշտպանության կազմակերպման անցկացման» կանոնակարգերը: Վերջինում նշվում է, որ դիպլոմային աշխատանքների «թեմաները պետք է համապատասխանեն գիտության և տեխնիկայի ժամանակակից պահանջներին, ուսանողի ձեռք բերած գիտելիքների ծավալին, ընդգրկելով այն հիմանական հարցերը, որոնց նրանք կարող են առնրվել հետագայում»: Կանոնակարգում ներկայացված է դիպլոմոյին աշխատանքների կառուցվածքը, կատարման և գրախոսման, պաշտպանության ընթացակարգը, գնահատման չափանիշները:

Դիպլոմային աշխատանքների թեմատիկայի մեջ կան շուկայի կողմից պահանջված հետազոտական թեմաներ: Դրա հետ մեկտեղ ակադեմիական ազնվության դիսկուրսը քոլեջում բացակայում է: Ակադեմիական ազնվության պահպանելուն, գրագողության վերահսկմանն միտված՝ ձևավորված արդյունավետ մեխանիզմներ քոլեջում առկա չեն:

Թեպետ քոլեջում մշակվել է ուսանողների գիտելիքի գնահատման բողոքարկման կանոնակարգ, սակայն չկա բողոքարկման ժամանակացույց: Քոլեջում ուսանողներն ու դասախոսները փորձագետներին հավաստիացերցին, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ բողոքարկման դեպքեր չեն լինում, իսկ խնդիրների առաջացման դեպքում դրանք լուծվում են կուրսղեկների միջնորդությամբ:

Ուսուցման մեթոդների ընտրության արդյունավետության գնահատման համար հստակ մեխանիզմներ ՄՈՒՀ-ում ներդրված չեն՝ բացառությամբ իրականացվող հարցումներն ու դասալսումները: Դասալսումների արդյունքում արձանագրված բացթողումների վերաբերյալ դասալսում իրականացնողների և դասավանդողների միջև իրականացվում է քննարկում, բարելավման քայլերի մշակում: Արդյունքները ամփոփվում են դասլսումների մատյանում: ՄՈՒՀ-ում գործում է Ձեռնարկությունների հետ քոլեջի համագործակցության կանոնակարգ: Պրակտիկաները հիմնականում կազմակերպվում են կնքված պայմանագրերի հիման վրա: Քոլեջն ունի պրակտիկայի ծրագրեր, պրակտիկաներին հետևում են այդ նպատակով կցված ղեկավարները կամ քոլեջի պրակտիկայի պատասխանատուն, արտադրական պրակտիկայի վերջում ուսանողները ներկայացնում են հաշվետվություն (օրագիր): Քոլեջում չկան պրակտիկաների արդյունավետության վերաբերյալ ուսումնասիրություններ:

ՇՏՊՔ-ն չունի բենչմարքինիգի իրականացման քաղաքականություն, մեթոդաբանություն, ինչպես նաև շարժունությանը նպաստող ծրագրեր: Քոլեջի ձեքբերումներից է դուալ կրթության վերաբերյալ կնքված հուշագիրը, որը ստորագրվել է Գերմանիայի կառավարության կողմից պատվիրված և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի աջակցությամբ, որի շրջանակում նախատեսվում է հետագայում ապահովել դասախոսների փոխանակում ու շարժունություն:

Քոլեջի որոշ դասախոսներ փորձել են կատարել համեմատական վերլուծություն և լավագույն փորձի ուսումնասիրություններ օգտվելով համացանցից կամ օտարալեզու գրականությունից: Արդյունքները ներկայացրել են մեթոդական զեկույցների տեսքով, կազմել իրենց աշխատանքի համար մեթոդական ձեռնարկներ, վերանայել և բարելավել են մոդուլային ծրագրերը, աշխատանքային թեմատիկ պլանները, ուսումնառության նյութերը, գնահատման թերթիկները:

ՄՈՒՀ-ում մշակված չէ «Մասնագիտական կրթական ծրագրերի որակի գնահատման քաղաքականություն և ընթացակարգ»: Կրթական ծրագրերի արդյունավետության գանահումն իրականացվում է ոչ համակարգված կերպով, դրա համար մեծամասամբ հիմք են ծառայում ամփոփիչ ատեստավորման արդյունքներն, ավարտական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, տեղի ունեցող քննարկումները, գործատուների հետ իրականացվող երկխոսությունը: Պետք է փաստել, որ դրանց արդյունքում վերհանված բացթողումների և թերությունների շտկմանն ուղղված քայլերը փորձարկման /պիլոտային/փուլում գտնվող ՄԿԾ-ների մասով հաշվետվությունների տեսքով ուղարկվել է լիազոր մարմնին:

Ոչ բոլոր շրջանավարտներն են աշխատում իրենց մասնագիտությամբ: ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարի տվյալների համաձայն 2014-2019 թթ. մասնագիտությամբ է աշխատում 101 շրջանավարտ, ոչ մասնագիտությամբ՝ 67: Սակայն շրջանավարտների

վերաբերյալ մանրամասն տեղեկություններ քոլեջը սկսել է հավաքել միայն վերջին տարիներին՝ կարիերայի կենտրոնի ստեղծումից հետո:

Դատողություններ

Քոլեջի մասնագիտությունները համապատասխանում են Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում նշված գերակայություններին, մարզի աշխատաշուկայի կառուցվածքին, դրանք համահունչ են հաստատության վերանայված առաքելությանը, մանրամասն նկարագրված են ըստ մոդուլների ուսումնառության արդյունքների: ՇՏՊՔ ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է ՊԿՉ-ների համաձայն, քոլեջը իր համար չի մշակել ՄԿԾ-ներ (բացառությամբ «Զբոսաշրջություն» և «Գովազդ, մասնագիտությունների), որոնց մշակումը կնպաստեր շրջանավարտի հավաքական նկարագրի առկայությանը և վերջնարդյունքահեն ուսուցման իրականացմանը: Քանի որ ուսումնական գործընթացը կազմակերպվում է պետական կրթական չափորոշիչներով, քոլեջի մասնագիտությունները բովանդակային առումով համահունչ են հանրապետության մյուս քոլեջների մասնագիտություններին և ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին: Արտերկրի նմանատիպ ծրագրերի հետ համեմատություն չի արվել: Քոլեջի ՌԾ-ում նախատեսվում է նպաստել ուսանողների ու դասախոսների շարժունությանը, սակայն փորձագիտական խումբը չգտավ ապացույցներ, որ այդ ուղղությամբ քայլեր են ձեռնարկվել:

Փորձագիտական խումբը փաստում է, որ դասախոները կիրառում են դասավանդման բազմաթիվ ինտերակտիվ մեթոդներ, որոնք հարստացվել են առցանց ուսուցման ընթացքում: Դրանց մի մասը բավական արդիական և առաջադիմական է, ինչը նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմանը: Դասախոսների կողմից մշակվել են հանձնարարականներ, որոնք նպաստում են ուսանողների արդյունավետ ուսումնառությանը, նրանց կողմից յուրաքանչյուր մոդուլի ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը: Հանձնարարականների մի մասը կատարվում է լսարանում կամ պրակտիկայի վայրում, մյուս մասը տրվում որպես տնային հանձնարարություն: Դրա հետ մեկտեղ փորձագիտական խմբի կարծիքով, քանի որ հանձնարարականների շտեմարան ստեղծված չէ, դա հնարավորություն չի տալիս գնահատել, թե որքանով են դրանք աջակցում ուսանողի առաջընթացին և նպաստում բոլոր կրթական վերջնարդյուքների ձևավորմանը: Համաճարակի պայմաններում՝ գարնանը, դասավանդման և ուսումնառության մեթոդները դարձել էին խիստ ռիսկային, սակայն հանդիպման ժամանակ փորձագետները համոզվեցին, որ դասախոսական կազմը մշակել է հանձնարարականների նոր փաթեթ, որի միջոցով փորձել է ապահովել նկարագրված ուսումնառության արդյունքները, նվազեցնելով ռիսկերը:

Ուսանողների գնահատման համակարգում կան դրական կողմեր՝ որոշ մոդուլային ծրագրեր ներառում են գնահատման միջոցների մանրամասն նկարագրություն, սակայն քանի որ մյուս մոդուլային ծրագրերում դա չկա, կարելի է եզրակացնել, որ այդ դրական փորձի գնահատման մեխանիզմների բացակայության հետևանքով այն տարածում չի գտել և չի ինստիտուցիոնալացվել: Դրական է, որ քոլեջում կիրառվում է ոչ միայն ամփոփիչ այլ նաև ձևավորող գնահատում, ինչը նպաստում է ուսանողների վերջնարդյունքների ձևավորման բարելավմանը: Ամփոփիչ ատեստավորման ընթացքում ուսանողները կարող են հանձնել քննություն կամ դիպլոմային աշխատանք ներկայացնել: Ողջունելի է, որ դիպլոմային աշխատանքների կատարումը տեղի է ունենում մշակված կարգի համաձայն, իսկ թեմատիկայի ցանկում կան բավական արդիական և պրակտիկ ելքերով թեմաներ, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, շուկայամետ և արդիական թեմաների ընտրությանը, գործատուի հետ ավելի սերտ համագործակցությանը:

Դրական է նաև այն, որ հաճախ դիպլոմային աշխատանքները ղեկավարում են գործատուները, ինչը նաև նպաստում հետագայում նրանց մոտ ծրջանավարտների աշխատանքի տեղավորմանը:

Քոլեջը մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկումը իրականացնում է միայն դասալսումների միջոցով, որոնց արդյունքները քննարկվում են ամբիոնների/ուսումնամեթոդական խորհրդի նիստերին, արդյունավետության գնահատման այլ մեխանիզմներ քոլեջում դեռևս չկան: Մինչդեռ արդյունավետության գնահատման այլ մեխանիզմների ներդնումը կարող էր նպաստել նոր խնդիրների վերհանմանը, դրանց լուծմանը, ինչը կհանգեցներ կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը ուսումնական գործընթացը կազմակերպում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, տարածաշրջանում քոլեջի մասնագիտությունների պահանջված լինելը, ուսանողակենտրոն դասավանդման և ուսումնառության բազմազան մեթոդների կիրառումը, որոնց մի մասը բավականին արդիական են և առաջադեմ, լսարանում, հանձնարարականների բազմազանությունը և դրանց համապատասխանությունը մասնագիտության ելքային պահանջներին, գործատուների հետ համագործակցությունը դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքում, կարելի է եզրակացնել, որ քոլեջը ընդհանուր առմամբ բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ՇՏՊՔ-ն դիմորդների ընդունելության գործընթացը իրականացնում է համաձայն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի ընդունելության կարգի: Քոլեջը կիրառում է հավաքագրման տարբեր մեխանիզմներ. պատրաստվում են քոլեջի մասին պատմող բուկլետներ, Հայաստանի քոլեջների և արհեստագործական ուսումնարանների տեղեկատուի մեջ ներկայացնում են մասնագիտությունների ցանկը, պատրաստվում է տեսահոլովակ, որը ցուցադրվում է տեղական՝ «Ցայգ» հեռուստալիքով, հայտարարվում են «Բաց դռների օրեր», որոնց միջոցով աշակերտների շրջանում կազմակերպվում են ճանաչողական այցեր քոլեջ, ինչպես նաև իրականացվում են իրազեկման և մասնագիտական կողմնորոշման այցեր դպրոցներ ՊԴ կազմի կողմից և այլն: Սակայն մինչ օրս չի իրականացվել ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն: Ուսանողների հանդիպման ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ նրանց գերակշռող մասը քոլեջ ընդունվել է իրենց ծանոթի խորհրդով:

Քոլեջում դեռևս չկա ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն ուսանողների կարիքների վերհանումն իրականացնում է հարցումների, տարբեր խորհուրդներում ընդգրկված ուսանողների, ինչպես նաև կուրսղեկների և ղեկավար անձնակազմի կողմից անցկացվող պարբերական հանդիպումների միջոցով:

Փորձագիտական խմբի վերլուծություններից պարզ դարձավ, որ հարցման ոչ բոլոր ուսանողներն են մասնակցել, դրանք չեն անցկացվել կայուն պարբերականությամբ, հարցումների արդյունքները չեն վերլուծվել և դրանք ազդեցություն չեն ունեցել: Խնդիրներ ունենալու դեպքում ուսանողները դիմում են կուրսղեկներին, որոնք նաև զբաղվում են ուսանողների կրթական կարիքների վերհանմամբ: Կրթական կարիքների վերհանմանը կարող է նպաստել նաև սովորողների ներգրավվածությունը քոլեջի կառավարման խորհրդում:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ ուսանողների գերակշռող մասը տեղյակ չի ուսանողական խորհուրդի գործառույթներից, այն հիմնականում զբաղված է միջոցառումների կազմակերպմամբ և չի ընկալվում որպես ուսանողների շահերը ներկայացնող և պաշտպանող մարմին:

Ուսանողները թույլ են ինֆորմացված ՈԱ պատասխանատուի գործառույթների վերաբերյալ, ավելի շատ են տեղեկացված Կարիերայի կենտրոնի գործառույթների և կազմակերպվող միջոցառումների մասին:

Քոլեջում մշակված և ներդրված չեն լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների հստակ ընթացակարգեր, սակայն դասավանդող յուրաքանչյուր դասախոս հատկացնում է դասաժամեր լրացուցիչ մասնագիտական խորհրդատվության համար, ինչպես կոնկրետ առարկայի, այնպես էլ կուրսային ու դիպլոմային աշխատանքների դեպքում: Քոլեջում ուսանողները կարող են խորհրդատվություն ստանալ դասախոսներից, կուրսղեկներից: Քոլեջի կողմից օգտագործվում են քաղաքում գործող այլ կազմակերպությունների ռեսուրսներ՝ ուղղելով դրանք իրենց ուսանողների կարիքների բավարարմանը: Օրինակ, Զբոսաշրջություն մասնագիտության ուսանողները քոլեջի ուղղորդմամբ մասնակցել էին Երիտասարդական պալատում կազմակերպվող օտար լեզուների խորացված դասընթացներին:

Քոլեջում լրացուցիչ ուսումնական օժանդակություն տրամադրելու նպատակով ուսանողների համար կազմակերպվել են նախասիրական դասընթացներ (ռուսերեն լեզու, օտար լեզու (անգլերեն), նկարչական նյութերի տեխնոլոգիա, նկարչություն):

Չնայած նրան, որ քոլեջում չկան ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ, սահմանված է տնօրենին դիմելու ժամանակացույց, մնացած վարչական կառույցների մասով գործում է նաև բաց դռների սկզբունքը և ուսանողները կարող են ցանկացած հարցով դիմել քոլեջի բոլոր ստորաբաժանումներին և ստանան իրենց հարցերի պատասխանը: Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզ դարձավ, որ կուրսղեկները օժանդակում են ուսանողներին այդ հարցում, իսկ ավագներին, որոնք ի պաշտոնե ուսանողական խորհրդի անդամ են, օժանդակում է նաև դաստիրակչական գծով փոխտնօրենը:

Քոլեջում 2013 թվականից գործում է մասնագիտական կարիերայի կենտրոնը, այն աշխատում է մանրամասն մշակված աշխատանքային պլան-ժամանակացույցի համաձայն: Կարիերային կենտրոնի նպատակն է նպաստել աշխատանքային շուկայում քոլեջի ուսանողների և շրջանավարտների մրցունակության զարգացմանը, շրջանավարտ-քոլեջ կապի ամրապնդմանը, քոլեջ-գործատու հարաբերությունների կանոնակարգմանը, պրակտիկայի կազմակերպմանը: Կարիերայի պատասխանատուի հետ ուսանողները պարբերաբար ունենում են հանդիպումներ, ֆիլմեր են դիտում, մասնակցում քննարկումների: Քոլեջը չի իրականացրել կենտրոնի աշխատանքի արդյունավետության գնահատում: Կարիերայի կենտրոնում ուսանողները սովորում են ինքնակենսագրություն կազմել, ունենում են մասնագիտական կողմնորոշման դասաժամեր, ուսումնասիրում գործատուին դիմելու և աշխատանքային հարցազրույցի ներկայանալու ձևը: Կարիերայի կենտրոնն ունի «Հայտարարությունների անկյուն», որտեղ տեղադրվում են աշխատաշուկայի մասին տեղեկություններ, որը Կարիերայի կենտրոնը ստանում է համագործակցելով ԶՏԿ-ի հետ:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողները ունենում են հնարավորություններ մասնակցել ցուցահանդեսների, մրցույթների, որտեղ ներկայացվում են ստեղծագործական աշխատանքներ: Նրանց տրված հանձնարարականները, կուրսային և դիպլոմային աշխատանքները պարունակում են հետազոտության տարրեր:

Քոլեջում բացակայում են իր գործունեության արդյունավետությունը գնահատող ինստիտուցիոնալ մեխանիզմները, մինչ օրս քոլեջը չի իրականացրել իր կողմից մատուցված ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատում: Իհարկե ուսանողների շրջանում իրականացվել է դասախոսների գնահատմանն առնչվող հարցում, բայց հարցման արդյունքները վերլուծված չեն, ստացել են միայն միջինացված միավորներ:

Դատողություններ: Քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ: Ընդունելությունը իրականացվում է լիազոր մարմնի մշակած կարգի համապատասխան: Փորձագիտական խմբի կարծիքով քոլեջը կարող էր բարելավել հավաքագրման և ընտրության մեխանիզմները, եթե իրականացներ առկա մեխանիզմների արդյունավետության գնահատում:

Փորձագիտական խմբի վերլուծությամբ ուսանողների կրթական կարիքների բացահայտման մեխանիզմների սահմանափակումը միայն կուսղեկների ինստիտուտով, հնարավորություն չի տալիս պարզել իրական կարիքները: Քոլեջում պարբերաբար անցկացվում են նաև հարցումներ, սակայն դրանք չեն վերլուծվում և ազդեցություն չեն ունենում:

Դրական է այն, որ քոլեջը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը՝ իրականացնելով լրացուցիչ (նախասիրական) պարապմունքներ, խորհրդատվություններ, ինչպես նաև հնարավորություն ստեղծելով, որ ուսանողները արտաքին գործընկերների միջոցով բավարարեն իրենց կրթական կարիքները, ինչը նպաստում է ուսանողների առաջընթացին:

Թեպետ քոլեջում սահմանված է միայն տնօրենին դիմելու ժամանակացույց, սակայն լինելով փոքր ուսումնական հաստատություն հնարավորություն կա անմիջական շփման և՛ վարչական, և՛ դասախոսական կազմի հետ: Դրական գնահատելով վարչակազմին դիմելու համար ստեղծված անմիջական մթնոլորտը, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում գործընթացի կանոնակարգումը, ինչը հնարավորություն կտա արձանագրել և գնահատել կատարված աշխատանքի արդյունավետությունը, բացահայտել բացերը և բարելավվել գործընթացը:

Չնայած 2013թ.-ից գործում է կարիերայի կենտրոնը, սակայն մինչև օրս գնահատված չէ կառույցի գործունեության արդյունավետությունը: Կարիերային կենտրոնի աշխատանքը կանոնակարգող փաստաթղթում կային բազմաթիվ գործառույթներ, որոնց ուղղությամբ դեռևս աշխատանք չէր տարվում (օրինակ, տեղական և միջազգային աշխատաշուկայի զարգացման միտումների մասին տեղեկատվության ամփոփման ուղղությամբ): Կարիերայի կենտրոնի արդյունավետ և թիրախային աշխատանքը կնպաստի քոլեջ-գործատու կապի ամրապնդմանը և պրակտիկաների բարելավմանը, ինչպես նաև աշխատաշուկայի կարիքների վերհանմանն ու ՄԿԾ-ներում տեղայնացմանը:

Թեպետ հաստատությունը դեռևս չի պարզել իր համար հետազոտության շրջանակը, սակայն դրական է, որ քայլեր է անում ապահովելու ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորումը՝ ուսանողների հանձնարարականների, կուրսային, դիպլոմային աշխատանքների միջոցով փորձում են ձևավորել վերլուծական, քննադատական և մասնագիտական մտածողություն: Դրական է, որ ուսանողներն իրենք հնարավորություն

ունեն ընտրել իրենց ուսումնասիրությունների թեմաները: Որոշ ուսանողներ մասնակցում են նաև մրցույթների, ցուցահանդեսների:

Ուսանողների իրավունքները հիմնականում պաշտպանվում են կուրսղեկի ինստիտուտի միջոցով, ուսանողական խորհուրդը չի իրականացնում ուսանողների իրավունքների պաշտպանության իր կանոնադրական գործառույթը: Դա սահմանափակում է ուսանողների քաղաքացիական ակտիվության աճը, նախաձեռնողական վարքը և ինքնուրույնությունը:

Քոլեջը կատարել է առաջին քայլերը կրթական ծառայությունների գնահատման ուղղությամբ, սակայն փորձագետների տեսանկյունից այն հարցաթերթիկը և հարցման մեթոդաբանությունը բարելավման կարիք ունի և կարևոր է ոչ միայն ստացված տվյալների միջինացումը, այլև դրանց վերլուծությունը և քննարկումը շահակիցների հետ: Քոլեջն ունի ուսանողի ուղեցույց, սակայն վերջինս չի համապատասխանում նման ձևաչափի ուղեցույցների պահանջներին և չի ապահովում ուսանողներին քոլեջի մատուցած ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա է ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված որոշ մեխանիզմներ, ՇՏՊՔ յուրաքանչյուր ուսանող ստանում է համապատասխան աջակցություն և անհատական մոտեցում վարչակազմի և դասախոսների կողմից, մասնավորապես կուրսղեկների, ինչպես նաև ուսանողներն հնարավորություններ ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների, ստանալու խորհրդատվություններ, քոլեջն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության սահմանված մեխանիզմներ, ընդհանուր առմամբ ապահովված է ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայրով, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունը հիմնված է ՀՀ աշխատանքային օրենսգիրքի վրա: Առկա է ՊԴ կազմի ընտրության ընթացակարգ: Ժամանակ առ ժամանակ Քոլեջը հայտարարում է մրցույթ և դրա մասին տեղեկացնում ԶԼՄ –ների միջոցով, այնուամենայնիվ հաստիքի համար հաճախ դիմում է այլ գործընկեր հաստատությունների, օրինակ ՇՊՀ:

Թափուր տեղի համար դիմած անձանց հետ անցկացվում են հարցազրույցներ, բաղկացած երկու փուլից՝ սկզբում կադրերի բաժնի տեսուչի հետ, այնուհետև բոլոր փաստաթղթերի հաստիքի հետ համապատասխանության դեպքում՝ ՇՏՊՔ տնօրենի հետ: Պաշտոնին համապատասխանության դեպքում դիմողն անցնում է փորձաշրջան, որը հաջողությամբ հաղթահարելուց հետո նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

Քոլեջում կան և հիմնական, և համատեղությամբ աշխատող դասախոսներ։

Քոլեջում շատ են երիտասարդ դասախոսները. դասախոսների ավելի քան 55% -ի տարիքը ցածր է 40 –ից։ Քոլեջի ՊԴ կազմը համապատասխանում է ՊԿՉ-ի դասախոսներին ներկայացվող պահանջներին, որը հիմնված է մասնագիտական կրթության և/կամ որակավորման համապատասխանության, ինչպես նաև տվյալ ոլորտում ցանկալի աշխատանքային փորձի վրա։ Քանի որ ՇՏՊՔ-ում մշակված չեն ՄԿԾ-ներ, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ ՊԿՉ-ից դուրս սահմանված չեն։

Արդեն իսկ աշխատող դասախոսներին նոր առարկաների բաշխման ժամանակ, հաշվի առնելով դասախոսի մասնագիտության համապատասխանությունը, ներկայացվում են տվյալ մոդուլները։ Եթե դասախոսի որակավորումը չի համապատասխանում դասավանդվող մոդուլի, ապա նա վերապատրաստում է անցնում և միայն դրանից հետո ստանում տվյալ առարկայի դասաժամերը։ Քոլեջում առկա չեն պաշտոնի անձնագրեր, բայց պայմանագրերում առկա են աշխատանքի նկարագրերը։

Քոլեջը չունի դասախոսական կազմի կարիքների վերհանման մեխանիզմ, թեև վարչական աշխատողների հավաստմամբ դասախոսները կարող են գրավոր ներկայացնել իրենց կարիքները։ Օրինակ, դասախոսները կարող են գրավոր հայտ ներկայացնել անհրաժեշտ գրականության, տեխնիկայի, գրենական պիտույքների կարիքի դեպքում։ Ֆինասական ռեսուրսների առկայության դեպքում դա ապահովվում է։

Քոլեջում առկա է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի դասավանդողների մասնագիտական որակներին և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգ» փաստաթուղթը, սակայն այն դեռ չի գործում։

Դասախոսական կազմի գնահատումը իրականացվում է միմյանց փոխադարձ դասալսումների, ուսումնական գծով փոխտնօրենի կողմից անցկացվող դասալսումների, դասախոսի անձնական թերթիկի, ինչպես նաև ուսանողների կողմից անցկացվող հարցումների հիման վրա։ Դասալսումները պարտադիր իրականացվում են, դրանց արդյունքները քննարկվում, դրանք նպաստում են դասավանդման որակի բարձրացմանը։ Մինչդեռ հարցումները պարբերական բնույթ չեն կրել, առկա հարցումները չեն վերլուծվել։ Փաստացի Քոլեջում դասախոսներին գնահատման միակ գործող մեխանիզմը դասալսումներն են, վերջիններս անցկացվում են համաձայն նախապես հաստատված ժամանակացույցերի և ապահովում են ՊԻԳԲ շրջափուլը։

Ընդհանուր առմամբ Քոլեջում վերապատրաստված է դասախոսների 62% -ը։ Դասախոսների վերապատրաստումը հիմնականում անցկացվում է ՄԿՈՒԶԱԿ –ի կողմից։

Դուալ կրթական ծրագրի շրջանակներում նոր մասնագիտական որակավորումներ ստանալու նպատակով Քոլեջում անցկացվել են հնգօրյա վերապատրաստումներ Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության (GIZ) կողմից 2018թ. հուլիսին, որին մասնակցել են նաև քոլեջի թվով 8 մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսներ։ Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության(GIZ) կողմից 2018թ. հոկտեմբեր ամսին անցկացվել է ևս մեկ վերապատրաստում, որին մասնակցել են ՇՏՊՔ տնօրենը, Դուալ կրթական ծրագրի ղեկավարը և մեկ դասախոս։

Կան նաև արտերկրում վերապատրաստումներ անցած դասախոսներ։ Դասախոսներից մեկը Գերմանիայում մասնակցել է գերմանական միջազգային համագործակցություն ընկերության «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Տեխնիկական մասնագիտական կրթություն և ուսուցում (ՏՄԿՈՒ) ոլորտում վարպետաց դասընթացների և ստացել է միջազգային մասնագետի վկայական։

Դասախոսական կազմի նոր վերապատրաստումներին և զարգացման ծրագրերին մասնակցելու պատրաստակամությունը մեծ է, ինչը պարզվեց փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում։ Քոլեջում դասավանդում են նաև գործատուներ և համապատասխան մասնագիտական ոլորտում պրակտիկ աշխատանքային փորձ ունեցողներ։

Այնուամենայնիվ, փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց նաև, որ վերջին շրջանում դասախոսների շրջանակում կա վերապատրաստումների բաց: Վերապատրաստումների հաճախականությունը փոքր է, և դասախոսները մասնագիտական վերապատրաստման կարիք ունեն, այլապես հետ են ընկնում մասնագիտական նորարարություններից:

Վերջին տարիների ընթացքում Քոլեջից դասախոսների արտահոսքը մեծ չէ, դասախոսներն ունեն տարիների աշխատանքային փորձառություն Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում, նույնիսկ ամենաերիտասարդներն արդեն մի քանի տարի անընդմեջ դասավանդում են: Դասախոսական կազմում կան ոլորտում պրակտիկ փորձառություն ունեցող անձնակազմ, որոնց մի մասը անմիջական գործատուներն են:

Քոլեջը դասախոսական կազմի կայունության ապահովման հիմք է դիտում դասախոսի ծանրաբեռնվածության բաշխման հիմնական նորմին ապահովումը /լրիվ դրույքի ապահովումը/ և լրավճարների տրամադրումը: Այցերի ընթացքում պարզվեց նաև, որ Քոլեջը չունի կադրերի ռեզերվ, քոլեջում մեկ առարկան դասավանդում է հիմնականում մեկ դասախոս:

Փորձագիտական առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսական կազմը մոտիվացված է, անտարբեր չի ուսանողների հաջողությունների և առաջընթացի նկատմամբ:

Քոլեջում չկա դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ քաղաքականություն և ընթացակարգ: Դասախոսական կազմի փոխադարձ դասալսումները և դրանց բանավոր քննարկումները քոլեջի կողմից ներկայացվում են դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման հիմնական մեխանիզմ: Ընդհանուր առմամբ դասախոսները նշում են, որ դասալսումներն արդյունավետ մեխանիզմ են, և հնարավորություն են ընձեռում նկատել միմյանց հնարավոր բացթողումները, կատարել լրացումներ, և օգտագործել լավագույն փորձը:

Վերապատրաստումներն իրականացվում են ո՛չ ըստ պահանջի, այլ ըստ հնարավորության:

Քոլեջում գործում են դասախոսական անձնակազմի խրախուսմանն ուղղված մեխանիզմներ, Քոլեջը 2016թ. -ից հաստատել է «Կանոնակարգ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի աշխատակիցներրին խրախուսման կարգ սահմանելու մասին» փաստաթուղթը: Ըստ Քոլեջի կանոնադրության խրախուսման տեսակներն են. բարոյական խրախուսումը՝ շնորհակալության հայտնումը, պատվոգրով պարգևատրումը և ֆինանսական խրախուսումը: Ֆինանսական խրախուսում ստացել է մեկ դասախոս, նոր ուսումնական պլանների կազմման ժամանակ կատարած լրացուցիչ մեծ աշխատանքի համար:

Քոլեջն ունի պատասխանատուների և աշխատակիցների կազմ, որոնք բավարար են Քոլեջի ռազմավարական նպատակները և հիմնական պահանջները բավարարելու համար:

Ուսումնական գործընթացը կազմակերպում և համակարգում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և ուսումնական մասի վարիչը: Բոլոր օղակները գործում են Քոլեջի կողմից սահմանված կանոնակարգերով, ՀՀ օրենքներին համաձայն:

Դատողություններ

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում դասավանդում է իրենց ոլորտներում փորձառություն ունեցող և մշտապես զարգացման ձգտող դասախոսական կազմ, որի ընտրության համար կան կայացած մեխանիզմներ:

Դրական է, որ դասախոսների մեծ մասը վերապատրաստվել է ՄԿՈՒԶԱԿ-ի փորձագետների կողմից, սակայն մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումները բացակայում են, մինչդեռ դրանց կազմակերպումը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին ու աշխատաշուկայի պահանջներին

համահունչ կրթական ծառայությունների մատուցմանը: Փորձագիտական խումբը պարզեց, որ դասախոսների շրջանում կա մասնագիտական վերապատրաստումների կարիք, որոնք պահանջում են ֆինասական ներդնում, սակայն ներկա պահին ՇՏՊՔ-ն չունի այդ հնարավորությունը: Նման բացի պատճառը Քոլեջի սուղ ֆինանսական միջոցներն են, որոնք անհնար են դարձնում վճարովի վերապատրաստումներին դասախոսների մասնակցությունը: Դասախոսների կարիքների վերհանման և գնահատման մեխանիզմները կատարելագործման կարիք ունեն:

Դրական է, որ աշխատանքի հանդեպ անձնակազմի մոտիվացիան բարձր է, ինչն էլ նպաստում է կրթության համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը դրական միտում է տեսնում դասախոսական կազմի երիտասարդացման և լավագույն որակավորումներով առավել փորձառու կադրերի պահպանման մեջ, ինչը ապահովում է սահուն սերնդափոխությունը: Դասախոսներից ոմանք վերապատրաստում են անցել նաև միջազգային ծրագրերով: Քոլեջը հետևողական է դասավանդման համար դասախոսների կրթության և/ կամ որակավորումների համապատասխանության ապահովման գործում:

Քոլեջում առկա են դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ, ինչպես բարոյական այնպես էլ ֆինանսական, որոնք լրամշակման և ավելի ակտիվորեն շրջանառության մեջ դնելու կարիք ունեն, ինչը կնպաստի աշխատանքի արդյունավետության էլ ավելի բարձրացմանը:

Դրական է, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի կայունության համար, սակայն կայունության ապահովման մեխանիզմներ դիտարկած ծանրաբեռնվածության նորմի ապահովումը /լրիվ դրույքի ապահովումը/ և լրավճարների տրամադրումը վստահություն չեն ներշնչում, դրանք պարունակում են չգնահատված ռիսկեր, որպես ապացույց փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին մեկ ուսումնական տարում հանվել են բոլոր լրավճարները, ԿԳՄՄՆ կողմից Քոլեջին տրամադրվող բյուջեի կրճատման հետևանքով: Քոլեջում կադրերի ռեզերվի բացակայությունը, մեկ դասախոսի կողմից մի քանի առարկայի դասավանդումը ռիսկային է դարձնում դասախոսական կազմի կայունությունը և նման երևույթը պահանջում է առնվազն կադրերի ռեզերվի առկայություն ֆորս մաժորային իրավիճակներից խուսափելու համար:

Դասախոսների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում սահմանափակվում է մեթոդական զեկույցներով և ձեռնարկներով: Դա դրական փորձ է, որը կարող է հարստացվել գործատուների հետ համագործակցության և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում:

Փորձագետները դրական են գնահատում գործատուների և ոլորտում մասնագիտական փորձ ունեցող մասնագետների դասավանդման պրակտիկան քոլեջում, քանի որ վերջինս հանդիսանում է արդյունավետ մեխանիզմ փոխկապակցել տեսական և գործնական հմտությունները, տալիս է հնարավորություն ուսանողներին անմիջականորեն ծանոթանալ ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական և ՈւՕ կազմի առկայությունը, ոլորտում տարիների աշխատանքային փորձ ունեցող, վերապատրաստումներ անցած, և բարձր մոտիվացիայով դասախոսների ուսումնական գործընթացին ներգրավածությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

2016-2021թթ. Ռազմավարական ծրագրում քոլեջն ունի իր հետազոտական հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարական նպատակ, որն է. «Մասնագիտական ոլորտի ուսումնասիրություններ, հետազոտություններ և նորարարություն: Առավելագույնի հասցնել քոլեջի դասախոսական ներուժի ներդնումը տնտեսության զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում՝ ստեղծելով գերազանցության կենտրոններ, խրախուսել քոլեջի աշխատակազմի, մասնավորապես դասախոսական կազմի կատարելագործմանը, նպաստել նրանց նախաձեռնողական աշխատանքներին և խթանել ակտիվ ներգրավմանը հետազոտական աշխատանքներում»: Այս նպատակին հասնելու համար դրվել են 2 խնդիրներ.

1. Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար
2. Խթանել քոլեջի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովելով քոլեջի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին:

Նշված խնդիրների ուղղությամբ քոլեջը պլանավորել էր հետևյալ քայլերը՝

- Գնահատել կատարվող ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքներն ըստ սահմանված խնդիրների չափանիշների, արդիականության և կիրառելիության,
- խթանել միջին մասնագիտական հետազոտական ծրագրերը և ուղղությունները,
- խրախուսել ուսանողների հետազոտական աշխատանքների ղեկավարումը,
- խրախուսել ուսանողների պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածությունը,
- քոլեջում պարբերաբար կազմակերպել միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտաժողովներ,
- աջակցել քոլեջի մասնագետների մասնակցությունը պետական, տեղական և միջազգային դրամաշնորհային և վարկային ծրագրերի մշակմանը և իրագործմանը,
- հասնել կայուն համագործակցող միջքոլեջային համագործակցության մեխանիզմներ՝ խմբերի ձևավորմանը,
- ստեղծել նախադրյալներ և նախապատրաստել անհրաժեշտ հետազոտական ներուժ՝ Եվրոպական շրջանակային ծրագրերում քոլեջի արդյունավետ մասնակցության և Եվրոպական հետազոտական տարածքում ակտիվ ներգրավման համար»:

Այդ քայլերի մեծ մասը չի իրագործվել և բյուջեում նույնպես առկա չէ որևէ տող ուղղված այդ նպատակների իրականացմանը: Քայլեր են արվել միայն ուսանողների պրակտիկաների կիրառական-հետազոտական դարձնելու ուղղությամբ, ինչպես նաև ուսանողների կուրսային և դիպլոմային աշխատանքների ղեկավարման գործընթացի կարևորման մասով: Այս պահին քոլեջում առկա է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի

փոխկապակցման մեխանիզմներ, քանի որ դիպլոմային, կուրսային աշխատանքներում, առարկաների հանձնարարականներում պարունակում են հետազոտության ու ինքնուրույն ստեղծագործության թույլ արտահայտված տարրեր, դասախոսների կողմից մշակվել են մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ, ոմանց մոտ առկա են լավագույն փորձի ուսումնասիրման ու իրենց դասավանդման գործընթացում տեղայնացման միտումներ։

2021-2023թթ. զարգացման ռազմավարական պլանում քոլեջի հավակնությունները ավելի իրատեսական են դարձել և քոլեջի նոր տեսլականում շեշտվել է, որ ՇՏՊՔ «ձգտում է դառնալ այնպիսի հաստատություն, որը… ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա, … ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր»։

Քոլեջում առկա չէ հետազոտությունների իրականացման հստակ քաղաքականություն։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ որևէ մեկն իրականացված հետազոտական աշխատանքի համար չի խրախուսվել։ Փաստացի, առ այսօր քոլեջում հետազոտությունների զարգացումն ու նորարարությունը խթանող մեխանիզմներ չեն գործարկվել։ ՇՊՏՔ աշխատակիցների խրախուսման կարգի 5-րդ կետի համաձայն դասագրքերի, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման համար /ամբողջ ուսումնական տարվա ընթացքում/ դասախոսին տրվում է 1 միավոր, ինչը բավականին ցածր է, քանի որ նույն միավորը դասախոսը կարող է ձեռք բերել քոլեջում հասարակական գործունեություն ծավալելու, միջոցառում կազմակերպելու համար։ Սակայն պետք է նկատել նաև, որ դասախոսական անձնակազմի կողմից նոր մասնագիտությունների և դուալ կրթություն ապահովելու ուղղությամբ իրականացվել են ուսումնասիրություններ։ Քոլեջի դասախոսական անձնակազմից երկու մասնագետ 2016 թ. մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպած հետազոտական աշխատանքների։ Կատարվել են «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ և «Գանձապահ» մասնագիտությամբ (որն այժմ քոլեջը չի իրականցնում) մոդուլային չափորոշիչների վերանայման աշխատանքներ։ Հիմնովին վերանայվել և փոփոխվել են «Սոցիալական աշխատանքի հիմունքներ», «Սոցիալական դեպքի վարում» և «Գանձապահ» մոդուլային ծրագրերը։ Ուսանողներին հնարավորություն է տրվում ընտրել և առաջարկել հետազոտության իրենց հետաքրքրող թեմաները։

Դասախոսներ ամբիոններում ներկայացնում էին մեթոդական զեկույցներ, մշակվում որոշ մեթոդական ձեռնարկներ, որոնցում նույնպես կան հետազոտության տարրեր։ Առանձին դասախոսներ ունեն գիտական ամսագրերում կամ ժողովածուներում հրապարակված մեկ, երկու հոդվածներ, որոնք սակայն շարունակական բնույթ չեն կրում։ Որոշ դասախոսներ ունեին հավաքագրված դասախոսությունների նյութեր, որոնք փորձագիտական առցանց այցի ժամանակ նշեցին, որ նպատակ ունեն տպագրելու։ Ամբիոնների և մասնագիտական հանձնաժողովների պլաններում առկա են մեթոդական ձեռնարկների և զեկույցների պլանավորում, նախատեսված են ուսանողների կուրսային և դիպլոմային աշխատանքների քննարկումներ։ ԻՎ-ում նշվում է նաև, որ «Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը բարձրացման առումով կարևոր դերակատարություն ունեն մասնագիտական ամբիոնները, որոնք անհատական

պարապմունքների ձևով ուսանողներին նախապատրաստում և ներգրավում են գիտական աշխատանքներում»: Նշենք, որ կատարված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, վերացել է ամբիոնը, որպես ստորաբաժանում, ինչը ռիսկային է դարձրել գիտական աշխատանքների նախապատրաստումը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ջանքերն ուղղված ստեղծագործական միջավայրի ձևավորմանը, սակայն միևնույն ժամանակ նշում, որ չի հստակեցվել ինչ է հետազոտությունը քոլեջի համար և այդ է պատճառը, որ քոլեջի տարբեր ռազմավարական փաստաթղթերում այն ներկայացվում է տարբեր կերպ, որը նպաստում է բոլոր շահակիցների կողմից հետազոտական գործունեության մասին տարրընկալման:

2016-2021թթ. ռազմավարական ծրագրում քոլեջի սահմանած նպատակները և խնդիրները շատ հավակնոտ էին և անհասանելի: 2021-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրով քոլեջը իջեցրել է նշաձողը և հետազոտական շեշտադրումն ուղղել ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը: Չնայած քոլեջում առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման տարրեր, սակայն այդ գործընթացը չունի համակարգված բնույթ, դրանց արդյունավետությունը ցածր է: Քոլեջում առկա են նման հանձնարարականների լավ փորձի օրինակներ, մասնավորապես «սոցիալական աշխատանքի» դեպքի վարումը: Դրանք երևացին նաև որոշ դիպլոմային, կուրսային աշխատանքներում, առարկաների հանձնարարականներում: Սակայն համապատասխան կայուն մեխանիզմների բացակայությունը ռիսկային է դարձնում դրական փորձի զարգացումն ու տարածումը, մինչդեռ այդպիսի մեխանիզմների մշակման դեպքում դրանք կարող են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան ձևավորել վերլուծական, քննադատական և մասնագիտական մտածողություն, ինչպես նաև մղել ինքնուրույն ուսումնասիրությունների: Այս ամենը կարող է լավ հիմք հանդիսանալ ուսանողների հետազոտական ունակությունների զարգացման ռազմավարության մշակման համար:

Դասախոսների կողմից իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի/մոդուլների հետազոտությունը հիմնականում փոխկապակցված է նոր մասնագիտությունների մշակման կամ չափորոշիչների փոփոխման գործընթացին մասնակից լինելու հետ: Հետազոտական գործունեությունը խրախուսող մեխանիզմն արդյունավետ չէ, չի մոտիվացնում դասախոսներին հետազոտություններ անելու, հոդվածներ հրապարակելու համար: Ամբիոնների վերացման պատճառով վտանգված է մեթոդական ձեռնարկների, զեկույցների պլանավորման և քննարկումների իրականացումը, քանի որ այս պահի դրությամբ այդ գործընթացը համակարգող կառույցը հստակեցված չէ: Քոլեջը որևէ բան չի անում հետազոտական աշխատանքների միջազգայնացման համար նախապայմաններ ստեղծելու համար:

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը անիրատեսական է, քոլեջի կողմից տրամադրվող ռեսուրսները բավարար չեն հետազոտական գործունեություն իրականացնելու համար, գործող խրախուսման համակարգի արդյունավետությունը ցածր է, առկա չէ քոլեջի հետազոտական գործունեության միջազգայնացում, թույլ է հետազոտության և ուսումնառության միջև եղած կապը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի շենքի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 998 մ², բակային տարածքը կազմում է՝ 1050 մ²: Քոլեջը բաղկացած է թվով երեք մասնաշենքերից, որոնցից մեկը նորակառույց է և կառուցվել է մյուս երկուսն իրար միավորելու համար: Քոլեջում լսարանների ընդհանուր թիվը՝ 295 է, որոնցից 118 –ը գտնվում են առաջին, 73 –ը երկրորդ, իսկ 104 –ը երրորդ մասնաշենքերում: Քոլեջն իր բոլոր մասնագիտությունների գծով ունի լաբորատորիաներ և լսարաններ, մասնագիտության համար անհրաժեշտ սարքավորումներով, ուսուցման տեխնիկական միջոցներով: Մասնավորապես, նրանցում առկա են համակարգիչներ, տպիչներ, պրոյեկտոր, smart-գրատախտակ: Իսկ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության համար նախատեսված լսարանում առկա են բավականին նոր մոդելների կարի մեքենաներ, արդուկելու սեղան և այլ պարագաներ դասապրոցեսը լիարժեք կազմակերպելու համար: Այս պահին ռեսուրսների պակասը լրացվում է գործընկեր գործատուների ռեսուրսների համատեղ օգտագործման շնորհիվ: Քոլեջի լսարանների 6,4%-ը տեխնիկապես լրիվ հագեցած է: Իսկ սենյակներից 4,4%-ում կա համացանցի հնարավորություն: Քոլեջի համակարգիչների 35%-ը միացված է քոլեջի համակարգչային ցանցին:

Քոլեջն ունի հանրակրթական առարկաների համար նախատեսված հետազոտական 2 լաբորատորիա՝ ֆիզիկայի և քիմիա -կենսաբանության: Քոլեջում առկա է մասնագիտական արհեստանոց, այն բաղկացած է 4 սենյակներից, կառուցվել է 2020թ. –ին: Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում ներկա պահին էլ ընթանում են նորոգման աշխատանքներ: Նորոգման փուլում է նաև ՇՏՊՔ-ի մարզադահլիճը: Քոլեջում առկա է սարքին վիճակում ջեռուցման համակարգ, սակայն շատ ծախսատար է: Քոլեջն ունի բուժկետ՝ 12 մ² մակերեսով, անհրաժեշտ պարագաներով, երկու մահճակալով և դեղերով ապահոված: Առաջին և երրորդ մասնաշենքերում կան մեկական սանհանգույցներ՝ տղամարդկանց և կանանց համար, սակայն երկրորդ մասնաշենքում առկա չէ տղամարդկանց համար սանհանգույց:

Քոլեջում առկա գրադարանն ու գրադարանում առկա գրականության քանակությունն ու ոլորտայնությունն ըստ ԻՎ –ն լրիվ բավարար էին թվում, սակայն փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզվեց, որ գրադարանում առկա մասնագիտական գրականությունը չի բավարարում և՛ տեսակային առումով, և՛ քանակային: Քանակական առումով ուսանողներին գրքով ապահովելու համար, Քոլեջում դասագրքերը թվայնացվել են, QR կոդը սքան անելու միջոցով ուսանողները կարող են ներբեռնել Քոլեջում առկա դասագրքերը: 2020 -2021թթ. Քոլեջը նախատեսում է էլեկտրոնային գրադարանի գործարքում:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում նաև պարզվեց, որ դասախոսներն ու ուսանողները կարիք ունեն առավել մեծ քանակությամբ և հզոր համակարգիչների, մասնավորապես որոշ կրթական ծրագրերի լիարժեք իրագործման համար դրանք խիստ անհրաժեշտ են: Պարզ դարձավ նաև, որ համացանցի՝ ոչ բոլոր սենյակներում առկայությունը և կապի ցածր որակը խնդրահարույց է:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում նաև պարզվեց, որ վերջերս Քոլեջը, դասախոսներից մեկի դիմումի համաձայն ձեռք է բերել նոր դյուրակիր համակարգիչ: Ինչպես նաև, եղել է հարցում համակարգիչների աշխատանքից բավարարվածության մասին, սակայն

այս հարցմանը Քոլեջի կողմից դեռ ընթացք չի տրվել: Այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ մոտ ապագայում դրամաշնորհային ծրագրի/ների շրջանակներում ակնկալում են նոր համակարգիչներով համալրում:

Քոլեջում առկա որոշ լսարանների տարածքը փոքր է (մասնավորապես նշվեցին համակարգչային սրահների և կարի արհեստանոցի տարածքները), ինչը խանգարում է որոշ ծրագրերի, մասնավորապես դուալ ծրագրերի լիարժեք կազմակերպմանը, սակայն նաև նշվեց, որ տարածքի սղության խնդիրը վերացնելու համար որոշակի քայլեր արդեն իրականացվում են՝ նկատի ունենալով տեղի ունեցող նորոգման աշխատանքները:

Ընդհանուր ուսանողները առմամբ գոհ են քոլեջում առկա ռեսուրսներից, նամանավանդ դուալ կրթական ծրագրի շնորհիվ, Քոլեջի ռեսուրսների բացերը հիմնականում կոմպենսացվում են: Ինչպես նաև, որ հեռավար ուսուցման պայմաններում գրադարանից օգտվում են՝ դասախոսներին դիմելու միջոցով, վերջիններս ուսանողներին տրամադրում են անհրաժեշտ նյութեր:

Քոլեջի բյուջեից տարվա կտրվածքով գումար է տրամադրվում (բյուջեի 20% -ի չափով) մասնաշենքերի, լաբորատորիաների և այլ շինությունների վերանորոգման և արդիականացման համար: Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ գումարը հատկացվում է ըստ կարիքի: Քոլեջում, հիմնականում ռեսուրսների համալրումն իրականացվում է դրամաշնորհներով:

Քոլեջի բյուջեն բավականեցնում է Քոլեջի գոյությունն ապահովելու համար (աշխատավարձներ, ջեռուցում), իսկ զարգացման ռազմավարական նպատակների իրականացման տեսանկյունից՝ ոչ:

Քոլեջում ըստ ռազմավարական նպատակների բյուջեի կազմման և բաշխման քաղաքականություն չկա կան ֆինանսների բաշխման որոշակի մեխանիզմներ: Յուրաքանչյուր տարի հունվար-փետրվար ամիսներին սկսվում են հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարների պլանավորման ուղղությամբ աշխատանքները: Կառավարման խորհուրդը հաստատում է Քոլեջի բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերի և ելքերի նախահաշիվները: Քոլեջը ֆինանսական միջոցների բաշխումն իրականացնում է ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ժամանակ, պարզվեց, որ թեպետ Քոլեջում բյուջեի կազմման և բաշխման քաղաքականություն չկա, սակայն գործող մեխանիզմներն արդյունավետ են, ինչի շնորհիվ Քոլեջը պարտքեր չի կուտակում, իսկ տարվա բյուջեի մնացորդ լինելու դեպքում, այն վերաբաշխվում է հաջորդ տարվա բյուջեի վրա:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի Կանոնադրությունում նշված է, որ քոլեջը կարող է ունենալ ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ, մասնավորապես՝ սեփական միջոցներ, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից, ՀՀ և արտասահմանյան իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը, ՀՀ համայնքների բյուջեները: Սակայն, փորձագիտական առցանց այցերի ընթացքում պարզվեց, որ վերջին կարճաժամկետ ծրագրից հետո, Քոլեջը ներկա պահին չունի ֆինանսական լրացուցիչ միջոցներ և ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ: Սակայն հնարավորության դեպքում մասնակցում է կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար հայտարարված մրցույթներին: ՇՏՊՔ ունի ֆինանսական աղբյուրների բազմազանեցման հետ կապված ռազմավարական լուրջ խնդիր:

Քոլեջի տրամադրած տվյալներից և փորձագիտական խմբի առցանց այցերից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի ՄԿԾ-ների իրականացման համար նախատեսված նյութատեխնիկական բազա: Քոլեջում առկա նյութատեխնիկական բազան հիմնականում համալրվում է դրամաշնորհային ծրագրերի, գործընկեր կազմակերպությունների միջոցով:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում, ֆինանսական միջոցների յուրաքանչյուր տարվա պլանավորումը կատարվում է նախորդ տարվա սկզբում:

Քոլեջում փաստաթղթաշրջանառության կազմակերպումը, փաստաթղթերի կառավարումը, ներքին և արտաքին փաստաթղթերի շարժը, իրականացվում է «Գործավարության կարգին» համապատասխան: Ներքին փաստաթղթաշրջանառությունը հիմնականում կատարվում է թղթային տարբերակով, ներքին ցանցի և էլեկտրոնային փոստի միջոցով: Քոլեջի ֆեյսբուքյան էջը նպաստում է տեղեկատվության տարածմանը: Քոլեջի տարբեր ստորաբաժանումների գործունեությունն արտացոլող փաստաթղթերի արխիվացումը կատարվում է գործավար- արխիվավարի կողմից:

Բուժկետը համալրված է նվազագույն անհրաժեշտ դեղորայքով, վարվում է գրանցամատյան: Քոլեջում աշխատում են պահակներ: Քոլեջը և հարակից բակային տարածքը տեսահսկվում են, Քոլեջում գործարկվել է ազդանշանային համակարգ, որը գործում են նաև լաբորատորիաներում: Քոլեջն ունի հակահրդեհային ազդանշանային համակարգ: Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը մշակել է «Քաղաքացիական պաշտպանության» փաստաթուղթը, Քոլեջում գործում է քաղաքացիական պաշտպանության շտաբ: Քոլեջում սովորում են նաև հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ, սակայն հենաշարժողական հաշմանդամություն ունեցող ուսանողների ուսումնառությունը Քոլեջում հնարավոր չէ կազմակերպել, չնայած, որ Քոլեջում և դրսից և ներսից առկա են թեքահարթակներ, սակայն այլ անհրաժեշտ հարմարություններ չկան:

Քոլեջում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չեն գործում, քանի որ իրականացվում են բանավոր, իսկ իրականացված հարցումները չեն վերլուծված:

Փորձագիտական խմբի առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջում ըստ կարիքի մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները գրավոր ներկայացնում են տնօրենին, անհրաժեշտ նյութերի և տեխնիկայի բացակայության մասին իրենց դիտարկումները, տվյալ դեպքում նախաձեռնող կողմը կարող է լինել և դասախոսը և տնօրենը:

Պարզ դարձավ նաև, որ ուսանողների շրջանում արվել են հարցումներ, սակայն չեն վերլուծվել: Ուսանողները կարիքները բարձրաձայնում են կուրսղեկների միջոցով:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ ուսանողները ռեսուրսների վերաբերյալ իրենց կարիքը ներկայացրել են տնօրենին և նա հետամուտ է եղել ուսանողների ցանկությանը, տրամադրելով նրանց նշված ռեսուրսը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ջանքերն ձևավորել իր մասնագիտությունների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, չնայած այն հանգամանքին, որ ՇՏՊՔ ռեսուրսների նորացումը տեղի չի ունենում կայուն պարբերականությամբ: Միժամանակ պետք է նշել, որ բյուջեից քոլեջին հատկացվող գումարների նվազեցման պայմաններում, քոլեջը մասնագիտությունների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկան բազայի պակասը լրացնում է դրամաշնորհային ծրագրերով:

Ընդհանուր առմամբ քոլեջի ռեսուրսային բազան թույլ է տալիս ապահովել անհրաժեշտ դասավանդման և ուսումնառության միջավայր, առկա ռեսուրսները հասանելի են ուսումնառողներին, իսկ գործատուները, հատկապես Դուալ կրթության պատրաստակամություն են դրսևորում իրենց ռեսուրսների համատեղ օգտագործման: Ուսանողներին հնարավորություն է ընձեռվում օգտվել առկա ռեսուրսներից նաև դասաժամերից դուրս, եթե դրա կարիքը լինում է:

Քոլեջում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատումն իրականացվում է ամբիոններում քննարկումների միջոցով, գործում է նաև անհատական հայտ ներկայացնելու

մեխանիզմը: Փորձագետները բավարար օրինակներ հավաքեցին այն բանի վերաբերյալ, որ հնարավորության դեպքում քոլեջը բավարարվում է այդ հայտերը, տրամադրելով նոր ռեսուսներ: Որպես դրա ապացույց կարելի է դիտել նաև ներկայիս շինարարական աշխատանքները, որոնք ուղղված են ուսումնառության պայմանների բարելավմանը:

Որպես ոչ մեծ կառույց իր կառավարման գործընթացի ապահովման տեսանկյունից առկա փաստաթղթաշրջանառությունը բավարար է, քոլեջի ներքին ցանցը ապահովում է վարչական կազմի աշխատողների տեղեկացվածությունը ընդունված որոշումների և հրամանների վերաբերյալ:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում ստեղծելու համար ապահով և անվտանգ միջավայր ուսանողների և դասախոսների համար:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ քոլեջի բյուջեն և նյութատեխնիկական բազան բավականեցնում է այսօրվա ուսումնական խնդիրները լուծելու, դասավանդման և ուսումնառության գործընթացը բավարար մակարդակով կազմակերպելու համար, սակայն չի նպաստում զարգացմանը, այդ պատճառով փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ակտիվությունը մրցույթով դրամաշնորհային ծրարգերին մասնակցելու և գործատուների հետ համագործակցելու ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, ուսումնական միջավայրի ստեղծման և Քոլեջի սահմանած առաքելության ու ռազմավարական նպատակների և մասնագիտությունների իրականացման համար ունի բավարար ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ դեպքում լրացվում են գործատուների ռեսուրսների համատեղ օգտագործմամբ, ինչպես նաև իր բյուջեի հնարավորությունների սահմաններում իրականացնում է մասնաշենքերի, լաբորատորիաների և այլ շինությունների վերանորոգում և արդիականացում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության հստակ կարգ, ըստ որի՝ ստորաբաժանումների մի մասը՝ նախապես սահմանված ձևաչափերին համապատասխան, հաշվետվություններ են ներկայացնում յուրաքանչյուրն իր աշխատանքը համակարգող վարչական մարմնին, որն էլ իր հերթին՝ տնօրենին: Սակայն հաշվետվությունները չունեն վերլուծական բնույթ, այլ արձանագրում են կատարված գործողությունները: Ստորաբաժանումների հաշվետվությունները ամփոփվում են տնօրենի հաշվետվությունում, որը ներկայացվում է քոլեջի Խորհրդին և լիազոր մարմնին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Քոլեջում գործող հաշվետվողականության համակարգը հիերարխիկ է: Արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության մեխանիզմներից է ՀՀ Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությանը, ու այլ պետական գերատեսչություններին օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացումը: Գործող հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ քոլեջում չեն իրականացվում:

Քոլեջի ընթացակարգերի, կրթական գործընթացների, տեղեկատվական համակարգի թափանցիկության ու հասանելիության վերաբերյալ քոլեջի հավակնությունները արտահայտվել են 2016-2021 թթ. ՌԾ-ի 3-րդ նպատակում: Դրան հասնելու համար քոլեջը սահմանել է հետևյալ գործողությունները.

- Ակտիվացնել հասարակության տարբեր խմբերի հետ քոլեջի համագործակցության հնարավորությունները…
- Բարելավել քոլեջի պաշտոնական կայքը, մեծացնել տեղեկատվական գրավչության շրջանակը, մշակել և ընդլայնել կրթական մակարդակով տեղեկատվական և ուսումնական նպատակով նյութերի համալրմանը, մշակմանը
- Կազմակերպել քոլեջի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ նչա գործունեությունը, հասարակության արդի պահանջմունքներին համահունչ դարձնելու նպատակով
- Ձևավորել լրացուցիչ կրթկան ծրագրերի կազմակերպման և իրականացման արդյունավետ մեխանիզմներ, որը հնարավորություն կտա նախաձեռնել, արձագանքել պատվերներին և/կամ իրագործել անձի մասնագիտական կատարելագորման կարիքներից բխող ծրագրեր
- Ուսումնասիրել, մշակել և առաջարկել ԼԿԾ (լրացուցիչ կրթական ծրագրեր)՝ ըստ թիրախային խմբերի , այդ թվում սոցիալական գործընկերության շահառուների
- Ապահովել քոլեջի ուսանողների, շրջանավարտների և դասախոսների կրթությունը շարունակելու հնարավորությունը՝ ԼԿԾ ուսումնառության ծրագրերով:

Քոլեջի գործունեության թափանցիկության և հասարակությանը հասանելիության համար օգտագործվում են տարբեր հարթակներ՝ «Ցայգ» հեռուստաընկերությունը, սոցիալական ցանցները, պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի այցելությունները տարածաշրջանի դպրոցներ, մասնակցությունները աշխատանքի տոնավաճառների և ցուցահանդեսների, տարբեր մրցույթների և այլն: Դիմորդների ներգրավելու համար քոլեջը տպագրում է բուկլետներ, Ուսանողի ուղեցույց: Առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների մասին քոլեջում պատրաստվում են իրազեկող տեսառեպորտաժներ, հոլովակներ, հոդվածներ և ֆոտոռեպորտաժներ, որոնք տարածվում են սոցիալական հարթակում, ինչպես նաև ԶԼՄ-ներում:

ՄՈՒՀ-ի ներքին (դասախոսներ, ուսանողներ, աշխատակիցներ և այլն) և արտաքին (գործատուներ, ծնողներ, պետական կառույցների ներկայացուցիչներ և այն) շահակիցները, ընդգրկված լինելով քոլեջի տարբեր գործընթացներում, նույնպես ապահովում են քոլեջի տարբեր գործընթացների հասանելիությունը հասարակությանը:

ՄՈՒՀ-ը հասարակությանը գիտելիքի փոխանցումն իրականացնում է կարճաժամկետ դասընթացների միջոցով: Մասնավորապես, 2020թ. սեպտեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 23-ը իրականացվել է «Հաշմանդամությունը, որպես մարտահրավեր Շիրակի մարզում:

Հաշմանդամ կանանց զինումը հմտություններով և գիտելիքներով» կարճաժամկետ ծրագիր, որի ընթացքում վերապատրաստվել են թվով 12 հաշմանդամ կանայք:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման հանրային պահանջարկը բացահայտելու գործում քոլեջին աջակցում է Զբաղվածության տարածաշրջանային կենտրոնը և գործատուները:

Պետք է փաստել, որ քոլեջը չունի հասարակության հետ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմներ և վերլուծություններ՝ որքանո՞վ են շահակիցները բավարարված այդ գործընթացներից, արդյոք դրանք համապատասխանու՞մ են հասարակության պահանջներին, կամ դրանց արդյունքում ի՞նչ ձեռքբերումներ և բացթողումներ են եղել: Քոլեջն առավել ճկուն հետադարձ կապի միջոց է համարում Facebook սոցիալական ցանցի պաշտոնական էջը, որտեղ յուրաքանչյուր ոք քոլեջի գործունեության մասին տեղեկատվություն ստանալուց բացի, կարող է կիսվել իրեն հուզող հարցի շուրջ և ստանալ համապատասխան արձագանք: ԻՎ-ում նշված է, որ քոլեջն ունեցել է իր պաշտոնական կայքէջը և վարել պաշտոնական E-mail, որոնք այժմ խափանված են: Կայքի բացակայության պայմաններում տնօրենի տարեկան հաշվետվությունը հասանելի չի հասարակությանը:

Այդուհանդերձ, առկա են այդ նպատակին ծառայող ոչ ֆորմալ մեխանիզմներ (հանդիպումներ, տարաբնույթ միջոցառումներ, բաց դռներ, խորհրդատվական ծառայություններ, դասընթացեր համայնքի գյուղերի աշակերտների համար և այլն):

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում առկա է ներքևից վերև հաշվետվողականության մեխանիզմ, որն աշխատում է կայուն պարբերականությամբ և ցույց է տալիս կարճաժամկետ պլանների իրագործումը: Թեպետ հաշվետվություններն ուղղակի փոխկապակցված չեն քոլեջի ռազմավարական ծրագրին, և անդրադարձ չի կատարվում նախորդ տարիների հաշվետվություններից վերհանված խնդրահարույց կետերին, սակայն դրնց միջոցով վեր է հանվում կարճաժամկետ պլանների կատարողականը, ընդգրկելով գործունեության տարբեր բնագավառներ:

Քոլեջի գործունեության թափանցիկությունը ապահովվում է տեղական հեռուստաընկերություններով, մամուլի տեղական օրգաններով, սոցիալական ցանցներով, տարածաշրջանի դպրոցներ այցելությամբ, ՏԻՄ-երի հետ առկա կապերով, աշխատանքի տոնավաճառներով, ցուցահանդեսներով, տարբեր մրցույթներին մասնակցելով և այլն: Թափանցիկության և հասանելության ապահովմանը հատկապես քոլեջին օգնում է «Ցայգ» հեռուստաընկերությունը, որը նաև քոլեջի ակտիվ գործատուներից է: Այս ամենը նպաստում է քոլեջի տեսանելիության բարձրացմանը հասարակության շրջանում:

ՇՏՊՔ-ն իրականացնում է կարճաժամկետ ծրագրեր, նպաստելով գիտելիքի փոխանցմանը հասարակությանը, հատկապես խոցելի խմբերին: Սակայն քոլեջը չունի տվյալների հավաքագրման քաղաքականություն և մեխանիզմներ և չի գնահատում այդ ուղղությամբ իր գործունեության արդյունավետությունը:

Շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմները շատ թույլ են ձևավորված, գործընկեր գործատուների հետ հետադարձ կապն ակտիվ է, սակայն գործընթացները չունեն համակարգված բնույթ: Այս հանգամանքները խոչընդոտում է արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը և վերլուծմանը, ինչն էլ իր հերթին չի նպաստում քոլեջի գործունեության բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՏՊՔ-ն ունի հաշվետվողականության հստակ մեխանիզմ, հարթակներ է գտնում իր գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և թափանցիկությունը ապահովելու համար, ունի գործատուների, ՏԻՄ-երի հետ կապերի ձևավորմանը նպաստող մեխանիզմներ, իրականացնում է հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման ծրագրեր, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է Չափանիշի 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը իր ռազմավարական ծրագերում նշվում է, որ Քոլեջը ձգտում է միջազգայնացման և միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրմանը և ներդրմանը: Սակայն, նշված դրույթները մեծամասամբ չեն իրագործվել: Այդ նպատակով չկան ձևավորված հատուկ քաղաքականություն և ընթացակարգեր: Չկան նաև արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրեր: Այնուամենայնիվ, Քոլեջը փորձում է այս ոլորտում ինքն դրսևորվել տարբեր միջազգային ծրագրերի միջոցով, ակտիվորեն օգտագործելով բոլոր ընձեռած հնարավորությունները:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություններից և փորձագիտական խմբի առցանց այցից պարզ դարձավ, որ Քոլեջը տարածաշրջանում արտաքին կապերի հաստատման առումով բավականին աշխատանք է տանում, ունի մի շարք գործատուներ, որոնց գործունեության ոլորտը համապատասխանում է Քոլեջի ընտրած մասնագիտական հիմնական ուղղվածություններին: ՇՏՊՔ-ում իրականացվում են դուալ կրթական ծրագրեր:

Փորձագիտական խմբի առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ հիմնական գործատուները շահագրգռված են աշխատել քոլեջի հետ, ցանկություն և պատրաստակամություն հայտնեցին քոլեջի ուսանողներին հետագայում աշխատանքի ընդունել:

Սակայն տարածաշրջանի քոլեջների հետ կապը բացակայում է, չկան համագործակցության պլաններ, քոլեջների միջև փորձի փոխանակում չի կատարվում, իհարկե կան որոշ բացառություններ՝ դասախոսների անձնական նախաձեռնությամբ արվել են, փորձի փոխանակման որոշակի քայլեր:

Քոլեջում դասավանդում են գործատուներ, ինչպես նաև նրանց աշխատակիցները: Քոլեջը չունի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք: Ոլորտի որոշակի գործունեությունն ամբողջությամբ իրականցվել է տնօրենի կողմից:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը համագործակցում է ՏԻՄ –երի հետ: Համագործակցության արդյունքում ուսանողներին ուսանողական տոմսերով հասարակական տրանսպորտից օգտվելու դեպքում 50% զեղչ պետք է հատկացվի :

Փորձագիտական առցանց այցի ժամանակ պարզվեց, որ Քոլեջը մասնակցել է դրամաշնորհային ծրագրերի և որ մի շարք համագործակցությունների շնորհիվ (այդ թվում ՄԱԿ –ի ծրագրերով և ՀՀ կառավարության հետ) որոշ ուսանողներ հնարավորություն են ստացել մասնագիտական աճի այդ թվում նոր մասնագիտության ձեռքբերման:

Մասնավորապես, թվով 4 ուսանողներ Kolba Lab ծրագրի շրջանակներում անցել են վճարվող պրակտիկա:

Քոլեջը մասնակցում է որոշ միջազգային կրթական ծրագրերին: 2018թ. -ին Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը փոխըմբռնման հուշագիր է կնքել Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (ԵՆԿ) հետ: Հետագայում արդեն 2019թ.-ին սույն համագործակցության շնորհիվ, «Էրազմուս +» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ուսումնական այց դեպի Իտալիա, որին մասնակցել են «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության ուսանող և դասախոս:

Փորձագիտական առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջին ի նպաստ արտաքին կապերի ձևավորման համար, մեծ դերակայատրություն ունեն կառավարման խորհրդի գործատու անդամները, վերջիններս իրենց անձնական կապերի շնորհիվ աջակցություն են ցուցաբերում Քոլեջի արտաքին կապերին:

Փորձագիտական առցանց այցերի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսների մեծ մասը տիրապում է ռուսերենին, իսկ որոշ դասախոսներ նաև անգլերենին, կան նաև այլ օտար լեզուների իմացությամբ դասախոսներ: Օտար լեզուների իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար Քոլեջում հատուկ քայլեր առայժմ չեն ձեռնարկվել, հետագայի համար նույնպես այս ուղղությամբ որևէ մեխանիզմ չի նշվում:

Ուսանողների մեծ մասի օտար լեզուների իմացության մակարդակը ցածր է: Ուսանողների անգլերենի իմացության մակարդակի լավացման համար չկան հստակ քայլեր: Լրացուցիչ անգլերեն պարապմունքներ անցկացվում են միայն այն ուսանողների հետ, ովքեր մինչ Քոլեջ ընդունվելը սովորել են այլ օտար լեզուներով:

Փորձագիտական առցանց այցերի ընթացքում պարզվեց, որ Գյումրու Երիտասարդական պալատի հետ համագործակցության շրջանակներում, եղել են ուսանողներ (թվով երեքը), ովքեր հնարավորություն են ստացել առավել խորացված անգլերեն ուսանելու հենց այնտեղ:

Դատողություններ: Շիրակի տարածաշրջանային պետական Քոլեջում միջազգայնացմանը նպաստող հստակ մեխանիզմներ, ընթացակարգեր և քաղաքականություն, ինչպես նաև միջազգայնացման հարցերով պատասխանատու կառույց չկա: Իրականացված ծրագրերը գործում են ի շնորհիվ անձնական կապերի, ուստի ռիսկային են, քանի որ հետագայում կարող են անձով պայմանավորված՝ ընդհատվել և խոչընդոտել կայունությանը:

Քոլեջն ունի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության փորձ, որի ակտիվացումը նպաստում է լավագույն փորձի կուտակմանն ու տարածմանը:

Փորձագիտական առցանց այցերի ընթացքում պարզվեց, որ թեև գործընկեր գործատուները հնարավորինս ներգրաված են ՇՏՊՔ-ի աշխատանքներում, մասնավորապես պրակտիկաների և Դուալ կրթության կազմակերպան հարցերում, ինչը նպաստում է քոլեջի աշխատանքների բարելավմանը, և շուկայի պահանջներին մշտական տեղեկացվածությունը, սակայն ինչպես քոլեջն է ներկայացրել իր ԻՎ-ում և 2021-2023 թթ. SWOT վերլուծության մեջ՝ կա այլ գործատուների մոտիվացիայի պակաս և ընդհանուր առմամբ գործատուների մեծ մասը շահագրգռվածություն չունի քոլեջի հետ ավելի սերտ համագործակցելու համար: Գործատուների հետ կայուն և պլանավորված աշխատանքները կնպաստեն արտաքին կապերի զարգացմանն ու գործատուների պահանջների ներդմանը քոլեջի ՄԿԾ-ներում: Գործատուների և պրակտիկ ոլորտի աշխատակիցների ներգրավվածությունը դասավանդման գործընթացում նպաստում է ուսանողների տվյալ ոլորտում պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը:

Քոլեջն ունի ՏԻՄ –երի, տարածաշրջանի դպրոցների, ԶԼՄ-ների հետ կապեր, սակայն որպես տարածաշրջանային քոլեջ և գերազանցության կենտրոն չի համագործակցում մարզի այլ քոլեջների հետ:

Միջազգայնացմանը նպաստող միջավայր ձևավորելու համար խիստ կարևորվում է օտարալեզու միջավայրի ստեղծումը:

Օտար լեզուների իմացության մակարդակը Քոլեջի դասախոսների և ուսանողների շրջանակում գտնվում է հաղորդակցման ցածր մակարդակի վրա: Այս ուղղությամբ ՇՏՊՔ-ն ակտիվ քայլեր չի ձեռնարկում, չունի օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի տեսլական:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որ Շիրակի տարածաշրջանային պետական Քոլեջում չկա արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման կայուն համակարգում, չկա միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, իսկ իրականացված ծրագրերը գործում են ի շնորհիվ անձային կապերի, այլ ոչ հստակ մշակված մեխանիզմների և/կամ ընթացակարգերի շնորհիվ, Քոլեջում օտար լեզուների իմացության ցածր ցուցանիշը և դրա բարձրացմանը նպաստող գործընթացների բացակայությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր:

2017թ.-ից քոլեջում ստեղծվել է Որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիք, որը միտված է աջակցելու հաստատության ՈԱ գործընթացներին: ԻՎ-ում նշված է, որ «ՇՏՊՔ-ում Որակի կենտրոնը հիմնվել է 2017թ., Կենտրոնի անձնակազմը ներառում է 1 հաստիք՝ կրթության որակի պատասխանատու: Պատասխանատուի հաստիքը բաշխված է 2 աշխատակիցների միջև՝ ապահովելու համար բազմաբովանդակ աշխատանքների համակարգում»: ՈԱ պատասխանատուները ապահոված են աշխատանքային պայմաններով, ապահովված է անհրաժեշտ գրասենյակային տեխնիկայով, կահույքով և նյութական ռեսուրսներով: Ֆինանսական ռեսուրսները բյուջեով հաստիքի համար նախատեսված աշխատավարձն է:

ՈԱ սկզբունքները, քաղաքականություն, որակի ապահովման համակարգի կազմակերպման կառուցվածքը հաստատվել է 2020թ.-ին և ներառված են ՈԱ ձեռնարկում, սակայն չունի դրա իրագործման համար հստակ ընթացակարգեր, անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ:

ՇՊՏՔ 2017 թ.-ի, 2018 թ.-ի, 2019 թ.-ի տարեկան հաշվետվություններում ՈԱ բաժնի հաշվետվությունները կրկնվում են, միայն փոխվել է տարեթիվն ըստ հաշվետու տարվա: Բոլորը սկսվում են հետևյալ ձևակերպումով հաշվետու տարվա «հունվարից-դեկտեմբեր ժամանակահատվածում քոլեջը գտնվել է ինքնավերլուծության գործընթացում՝ պատրաստվելով արտաքին ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Այդ ընթացքում իրականացրել են մի շարք որակական և քանակական հետազոտություններ ու ՈԱ կենտրոնի կողմից արդյունքները ներկայացվել է մասնագիտական հանձնաժողովներ բարեփոխումներ անելու նպատակով»: Այս փաստն արդեն իսկ հիմնավորում է, որ ՈԱ պատասխանատուները որոշ հարցումներ են իրականացրել, սակայն քոլեջում ոչ մի քայլ չի իրականացվել որակի

ապահովման ներքին համակարգի ներդրման ու կայացման համար: Ուսումնասիրությունները նաև ի ցույց դրեցին, որ առկա չեն հարցումների վերլուծված արդյունքներ, բացահայտված խնդիրներ, մշակված բարեփոխման քայլեր: Առկա է միայն դասախոսների շրջանում անցկացված հարցման ու դասախոսների դասընթացների գնահատման տվյալների ամփոփում:

Հարցումների կազմակերպման և անցկացման, տվյալների հավաքագրման ու մշակման, արդյունավետության գնահատման գործընթացներն ապահովված չեն հստակ մեթոդաբանությամբ: Սակայն կան մշակված տարբեր հարցաթերթեր: Քոլեջում հարցումներն են դիտարկվում որպես որակի ապահովման հիմնական մեխանիզմ, որոնք անցկացվել են դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում: Սակայն ինչպես պարզվեց այցի ընթացքում, այդ հարցումները պարբերական և համակարգված բնույթ չեն կրել, հստակեցված չեն դրանց նպատակները, դրանց արդյունավետությունը դեռևս գնահատված չէ: Հարցաթերթիկների տրամադրված օրինակներից պարզ է, որ քոլեջը հստակ չի գնահատել գործիքի դերը, այլ մշակվել է որպես պահանջ:

Բացի հարցումներից ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմներ և օրինակներ առկա չեն: Որոշ ուսանողներ նշեցին, որ իրենք հարցումների նախկինում մասնակցել են, սակայն կրկին տեղեկացված չեն հարցումների նպատակից և տեղյակ չէին կառույցի գոյությունից:

Քոլեջի ոչ մի գործընթացում, բացի դասալսումներից ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ:

Քոլեջում որակի ապահովման ներքին համակարգը դեռ ներդրման փուլում է, անձնակազմն 2017թ.-ից ի վեր մի քանի անգամ փոփոխվել է և նոր թիմն ը վերապատրաստումներ չի անցել:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում ակնհայտ դարձավ, որ Որակի ապահովման գործընթացներում ներգրավված ներքին և արտաքին շահակիցները չունեն հստակ ակնկալիքներ ՈԱ գործընթացներից, չկա հստակ դերի ընկալում: Քոլեջի աշխատակիցները հիմնականում տեղեկացված չեն քոլեջի ՈԱ ձեռնարկի և դրանում ներառված դրույթներին, նաև այնտեղ սահմանված պարտականություններին: Այսինքն՝ առկա է որակի ապահովման գործառույթների վերաբերյալ քոլեջի աշխատակիցների տեղեկացվածության և փորձի պակաս:

Որակի ապահովման ներքին համակարգի վերաբերյալ թափանցիկության ապահովման կարևորագույն մեխանիզմներից կարող է հանդիսանալ քոլեջի կայքէջը, որը չի գործում: Քոլեջում որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է: Որակի ապահովման համակարգի մշտադիտարկում և գնահատում դեռևս չի իրականացվել: Տվյալների հավաքագրման գործընթացը համակարգված և ամբողջական բնույթ չի կրում, ինչը մեծապես դժվարացնում է քոլեջի աշխատանքի արդյունավետության գնահատումը որակի արտաքին գնահատման ժամանակ: Արտաքին գնահատման նպատակով ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը նկարագրական է, բացակայում է վերլուծական մոտեցումը, որոշ չափորոշիչների մասով տեղեկատվությունն ընդհանրապես բացակայում է, իսկ որոշներում տեղեկատվությունը ունեցել է վաղեմության այլ ժամկետ:

Դատողություններ:

Փորձագիտական առցանց այցից պարզ դարաձավ, որ քոլեջի կառավարման բացթողումների մեծ մասը գալի է նրանից, որ քոլեջում որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է և կառավարման մեխանիզմների արդյունավետության գնահատման համակարգ առկա չէ:

Չնայած 2017 թ.-ից ունի ՈԱ պատասխանատու, Որակի ապահովման քաղաքականությունը մշակվել է միայն 2020թ.-ին, մինչ այժմ չկան իրագործման համար հստակ ընթացակարգեր, անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ, որոնք հնարավորություն կտան գործառնել ՈԱ ներդրվող համակարգին և ձևավորել որակի մշակույթը:

Քոլեջը որակի ներքին ապահովման գործընթացների համար տրամադրում է մարդկային, նյութական և որոշ ֆինանսական ռեսուրսներ, սակայն ներգրավված աշխատակիցները ունեն վերապատրաստումների կարիք իրենց գործառույթներն իրականացնելու համար: Որակի ապահովման վերաբերյալ աշխատակիցների կարողությունների և գիտելիքիների հզորացումը կօգնի կենտրոնի կայացմանն ու կնպաստի որակի մշակույթի ձևավերմանն ու լավ փորձի, ինչպես նաև խնդիրների դուրսբերմանը:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցները իրազեկված չեն որակի ապահովման գործընթացների մասին: Դեռ ներդրված չէ տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման, տարածման համակարգված մոտեցումը: ՊԻԳԲ շրջափուլը դեռևս չի գործում, բացառություն է կազմում դասալսման գործընթացը: Քոլեջի գործունեության մեջ չի կարևորվում դրա դերը, հակառակ դեպքում չէր անտեսվի այն փաստը, որ 2017-2019թթ հաշվետվություններում, այսինքն՝ Կենտրոնի ստեղծման պահից ի վեր, լրիվ նույն տեքստն է ներկայացվում, որպես տարեկան գործունեության արդյունք:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի ներքին ապահովման համակարգը Քոլեջում գտնվում է դեռ ներդրման փուլում, վերջինս ոչ մի ազդեցություն չունի քոլեջի գործընթացների վրա և չի ապահովում քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավումն ու որակի մշակույթի ձևավորում, Քոլեջում չեն իրականացվում նաև աշխատանքներ ներքին շահակիցների շրջանում ՈԱ համակարգի վերաբերյալ տեղեկացվածության ապահովման նպատակով, ներդրված չէ տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխզնիզմ, որոշումները չեն կայացվում տվյալների հիման վրա, չկա փաստաթղթավորված և համակարգված մոտեցում որակի ապահովման վերաբերյալ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար
2. Կառավարում և վարչարարություն	Անբավարար
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար
4. Ուսանողներ	Բավարար
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարար
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար

Մարիամ Մովսիսյան

29.01.2021

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մարիամ Սամվելի Մովսիսյան: 2006թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ ստանալով Փիլիսոփայության մագիստրոսի որակավորում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է իրավունքի ու կրթության փիլիսոփայությանը, դատական փաստարկմանը վերաբերվող թեմաները: 2006թ.-ից դասավանդում է փիլիսոփայություն, հաղորդակցման հմտություններ, հասարակագիտություն առարկաները Հայաստանի ազգային ագրարային համալսարանում: Աշխատել է ՀԱԱՀ կրթական բարեփոխումների ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլության վարչության կրթության որակի վերահսկման և ինքնավերլության բաժնում որպես առաջատար մասնագետ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարնում որպես հետազոտող գիտական թեմայի շրջանակներում, ՀԱԱՀ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի գլխավոր մասնագետ, 2018թ.-ից ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն, 2012թ.-ին մասնակցել է ՀԱԱՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին, անցել է ՈԱԱԿ-ի վերապատրաստումներ, 2013թ.-ին ՈԱԱԿ հիմնադրամի ՆՄՀ ծրագրի շրջանակներում որպես ՀՀ համալսարանների պրոֆեսորադասախոսական և որակի ապահովման անձնակազմի վերապատրաստող: Ներգրավված է եղել «GOVERN», «VERITAS» TEMPUS ծրագրերում և վերապատրաստվել վերջիններիս շրջանակներում, մասնակցել է ծրագրային մոնիթորիգներին և արտաքին գնահատումներին, փոխանակման ծրագրերի շրջանակերում հնարավորություն է ունեցել դասավանդել Պորտուգալիայի Մինհոյի (Բրագա) և Լեհաստանի Յագելանիան համալսարաններում: Տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին:

Էլեն Համլետի Հարությունյան: Էլեն Հարությունյան: 1992թ. ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը երկու մասնագիտություններով և ստացել էլեկտրոնային տեխնիկայի ինժեների և բժշկական կիբեռնետիկի որակավորումներ: 2009թ. ավարտել է Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը և ստացել մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում: Աշխատել է՝ Երևանի թիվ 144 դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցչուհի, Երևանի Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 դպրոցում որպես մաթեմատիկայի և գծագրության ուսուցչուհի, Ֆիզմաթ և բնագիտական առարկաների մեթոդմիավորման նախագահ, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի քոլեջում որպես ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն: Այժմ աշխատում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա ֆակուլտետում դեկանի տեղակալ, քոլեջում՝ մաթեմատիկայի դասախոս: Անցել է ՈԱԱԿ վերապատրաստումները, եղել է Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում ՈԱԱԿ փորձագիտական խմբի անդամ:

Արփի Տիգրանի Սիմոնյան: 2016 թթ. գերազանցությամբ ավարտել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Կիբեռնետիկայի» բաժինը և ստացել բակալավրի աստիճան՝ «Էլեկտրոնային տեխնիկա» մասնագիտությամբ: 2018 թթ. գերազանցությամբ ավարտել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի» ինստիտուտի «Էլեկտրոնային տեխնիկա» բաժինը և ստացել մագիստրոսի աստիճան՝ «Էլեկտրոնիկա» մասնագիտությամբ: 2017-2018 թթ. ուսմանը զուգահեռ աշխատել է «Այ-Դի-Թի-ԱՐՄ» (IDT-ARM) ՍՊԸ-ում՝ որպես ծրագրային ապահովման կրտսեր մասնագետ: 2019թ. -ից աշխատում է Հայաստանի ազգային

պոլիտեխնիկական համալսարանում (ՀԱՊՀ)՝ լաբորանտ: 2020թ. -ից Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի քոլեջում (ՀԱՊՀ Քոլեջ) դասախոս է: Մասնագիտացած է մի շարք ծրագրավորման լեզուներում, ինչպես նաև տիրապետում է ռուսերենի, անգլերենի, պորտուգալերենի:

Դավիթ Կարենի Ոսկանյան: 2019-ին ավարտել է «Ուսում» հանրակրթական դպրոցը և ընդունվել ԵԻՊՔ (Երևանի Ինֆորմատիկայի Պետական Քոլեջ) ծրագրավորման մասնագիտությամբ: Մասնակցել է «Microsoft Innovation Center»-ի ծրագրավորման դասընթացներին: 2020թ-ին մասնակցել է ՈՒԱԿ-ի կողմից կազմակերպված ուսանող-փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

01.12.2020թ.-04.12.2020թ.

	01.12.2020թ	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	9:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:00	11:50	50 րոպե
3.	Հանդիպում քոլեջի խորհրդի անդամների հետ	12:35	13:25	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:45	14:45	60 րոպե
5.	Հանդիպում Ուսումնամեթոդական խորհրդի անդամների հետ	15:00	16:00	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:30	120 րոպե

	02.12.2020թ	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	9:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	11:00	12:00	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
4.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	13:45	14:45	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:00	15:40	40 րոպե
6.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	16:25	17:25	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե

	03.12.2020թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կադրերի տեսուչ, հանրակրթության բաժնի վարիչ, պրակտիկայի վարիչ, հաշվապահ, իրավախորհրդատու, գրադարանավար, կարիերայի ուղղորդման պատասխանատու, դուալ կրթական ծրագրերի ղեկավար, տնտեսվար, լաբորանտ, մանկավարժ-հոգեբան)			9:30	10:30	60 րոպե
2.	Զուգահեռ հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, ցանցեր» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ների դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)		11:00	12:30	90 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկում			12:50	13:50	60 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Զուգահեռ հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, ցանցեր» ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	14:10	15:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի քննարկում			15:20	15:50	30 րոպե
6.	Հանդիպում Ուսումնամեթոդական խորհրդի անդամների հետ			16:00	17:00	60 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն			17:45	19:00	75 րոպե

	04.12.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	9:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:00	11:40	40 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկում	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:00	16:00	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:00	17: 00	90 րոպե
7.	Հանդիպում ՇՏՊՔ ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Կուրսղեկների պլաններն ու հաշվետվությունները	2
2.	Ամբիոնների, մասնագիտական հանձնաժողովների, ուսումնամեթոդական խորհրդի պլաններն ու հաշվետվությունները	2
3.	Ամբիոնների դասախոսների կազմը	2
4.	Ամբիոնների աշխատանքային պլանների օրինակներ	2
5.	Դասախոսների աշխատանքային պլաններ	2, 5
6.	Տեղեկագրերի օրինակներ	2
7.	Ամբիոնների կանոնակարգ	2
8.	Կուրսային աշխատանքների խորհրդատվությունների ժամանակացույց	2
9.	Աշխատողների հաստիքացուցակ ըստ ՄԿԾ-ների	2, 3, 5
10.	3 ՄԿԾ-ների ուսումնական պլաններ	3
11.	3 ՄԿԾ-ների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքներ	3
12.	ՄԿԾ-ների մոդուլների հանձնարարականների օրինակներ	3
13.	Դասացուցակներ	3
14.	ՄԿԾ վերանայման հիմքեր /վերլուծություն, արձանագրություն և այլն/	3
15.	Դասալսումների արձանագրություններ	3
16.	Մոդուլի յուրացման գնահատման ամփոփ թերթիկի օրինակ	3
17.	Կուրսային աշխատանքի կազմակերպման, կատարման և գնահատման կանոնակարգ	3
18.	Ուսումնառության պլաններ /օրացուցային պլան/	3
19.	Ուսանողի անհատական ամփոփիչ աշխատանքների օրինակներ	3
20.	ՄԿԾ-ների կուրսային աշխատանքի վերջին 3 տարվա թեմատիկա	3, 6

21.	3 ՄԿԾ-ների ավարտական աշխատանքների վերջին 3 տարվա թեմատիկա	3, 6
22.	3 ՄԿԾ-ների կուրսային աշխատանքի վերջին 3 տարվա թեմատիկա	3, 6
23.	3 ՄԿԾ-ների ավարտական աշխատանքների վերջին 3 տարվա թեմատիկա	3, 6
24.	«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ- ի գործատուների տվյալները և պայմանագրերի ժամկետները	3
25.	Կուրսային աշխատանքների օրինակներ	3, 6
26.	Ավարտական աշխատանքների օրինակներ	3, 6
27.	Դասախոսների մեթոդական ձեռնարկների օրինակներ	3, 5
28.	Դասախոսների մեթոդական զեկուցումներ	3, 4, 5, 6
29.	Կարիերայի կենտրոնի վերջին 3 տարվա հաշվետվությունները, արձանագրություններ	4
30.	Ուսանողական խորհրդի նիստերի արձանագրություններ	4
31.	Պրակտիկաների օրագրերի լրացրած օրինակներ	4
32.	Պրակտիկայի պայմանագրեր /Սվետ-Տեքս/	3, 4
33.	Զբոսաշրջության փաթեթի օրինակներ, դրանց SWOT	3
34.	ՄԿԾ 3 Մասնագիտությունների դասավանդող դասախոսների տվյալները ըստ առարկաների	3
35.	Դասախոսների, ուսանողների հարցումների վերլուծություններ	10
36.	Շրջանավարտների, գործատուների հարցումների վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Քանի որ փորձագիտական այցը կազամկերպվել էր առցանց ՇՏՊՔ աշխատակիցները նկարահանել էին ռեսուրսները: Քոլեջում այցի պահին ընթանում էին շինարարական աշխատանքներ, այդ պատճառով բոլոր ռեսուրսները հնարավոր չեղավ դիտարկել: Փորձագետները տեսան հետևյալ ռեսուրսները.

- Համակարգչային 2 լսարաններ
- Կարի արտադրամասը
- ՆԶՊ կաբինետ
- Խոհանոց
- Գրադարան
- Դասախոսարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6.ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ՇՏՊՔ –** Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ
2. **ԻՎ** - ինքնավերլուծություն
3. **ԼԿԾ** – լրացուցիչ կրթության ծրագիր
4. **ՄԿԾ** - մասնագիտության կրթական ծրագիր
5. **ՄԿՈՒԶԱԿ –** Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
6. **ՄՈՒՀ-** մասնագիտական ուսումնական հաստատություն
7. **ՊԴ** կազմ – պրոֆեսորադասախոսական կազմ
8. **ՊԿՉ –** պետական կրթական չափորոշիչ
9. **ՊԻԳԲ –** որակի շրջափուլ (պլանավորում, իրագործում, գնահատում, բարելավում)
10. **ՈԱՇ** – որակավորումների ազգային շրջանակ
11. **ՈԱ** - որակի ապահովում
12. **ՈԱ մեխանիզմներ** – որակի ապահովման մեխանիզմներ
13. **ՈՆԱ -** որակի ներքին ապահովում
14. **ՈՆԱՀ -** որակի ներքին ապահովման համակարգ
15. **ՌԾ –** ռազմավարական ծրագիր
16. **ՈՒԽ** – ուսանողական խորհուրդ
17. **ՈՒՕ** – ուսումնաօժանդակ կազմ